Ազգ
Azg

26 ՀՈՒՆԻՍ 2020 ՈՒՐԲԱԹ 19(5616)

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Քոչարյանի Չիու քայլը

ՀՀ երկրորդ նախագահ, Մարտի 1-ի գործով ամբաստանյալ Ռոբերտ Քոչարյանը երեկ շատ անսպասելի, իշխանություններին հանկարծակիի բերող քայլ արեց. նախագահի փաստաբանները Սահմանադրական դատարանից հետ վերցրին 2019-ին ներկայացրած դիմումները: Հիշեցնենք, որ այդ դիմումների համաձայն՝ ՍԴ-ը դիմել էր Վենետիկի հանձնաժողովին եվ ՄԻԵԴ-ին: Միջազգային իրավական կառույցներից ստացված կարծիքները, ըստ Քոչարյանի փաստաբանական խմբի՝ երկրորդ նախագահի օգտին են եւ հնարավոր է՝ հարցը քննվեր եվ հոդվածը, որի համաձայն դատական գործ է սկսվել Ռ. Քոչարյանի նկատմամբ, համարվեր հակասահմանադրական: Պարզ է, որ հունիսի 22-ին ԱԺ-ի ընդունած Սահմանադրական փոփոխությունների մասին օրենքը հարակից այլ նպատակաների հետ մեկտեղ՝ նաեւ Ռ. Քոչարյանի նկատմամբ դատաիրավական գործընթացը մինչեւ վերջ տեղ հասցնելու համար է: Ջուգահեռ՝ կալանքը որպես խափանման միջոց՝ 2 միլիարդ դրամ գրավով փոխարինվեց: Եվ այս համատեքստում Ռ.Քոչարյանը շախմատային անկանխատեսելի քայլ արեց՝ դիմումը ՍԴ-ից հետ վերցնելով: Ինչո՞ւ, հեռահար, կամ գուցե մոտալուտ ի՞նչ նպատակով դա արեց: Վստահաբար, նրա քայլից անակնկալի են եկել ոչ միայն իշխանությունները, այլեւ ընդդիմությունը, որը, ըստ էության, ոչ թե իր կարգավիճակից ելնելով՝ ընդդիմացավ սահմանադրական փոփոխությունների ընդունմանը, այլ փաստացի չեզոք դիրք գրավեց: Ըստ խաղի կանոնների, հաջորդ քայլն իշխանություններինն է լինելու՝ ի պատասխան Քոչարյանի շախ եւ մատի:

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Հայաստանը՝ ինքնամեկուսացման մեջ

Խոսքը չի վերաբերում համավարակի դեմ տեղի ունեցող կամ չունեցող ինքնամեկուսացմանը, որը մեր երկրում իրականացվում է այնպես, ինչպես... Ասված գիտի, թե ինչպես: Խոսքը քաղաքական, տնտեսական, միջազգային, ներազգային, տեղեկատվական ու հոգեբանական մեկուսացման մասին է: Չհաշված՝ աշխարհագրականը, որը մեր սերնդի ու մեկ սերնդի մեղքով չէ:

Սկսենք վերջինից: Այն օրվանից, երբ պատերազմական գործողությունների հետեւանքով մենք ու ազերիները ջանադրաբար «պատմությանը» հարակից անցնող երկաթուղին, իսկ Թուրքիան 1992-ին փակեց սահմանը մեզ ճնշահեղձ անելու նպատակով, Հայաստանի իշխանությունները ամեն ինչ արեցին, որքան որ կարող էին, երկրի օդային սահմանները բաց եւ աշխույժ պահել, նույնիսկ տնտեսապես ոչ նպատակահարմար ուղեթռիչքներ ձեռնարկեցին Երեւանից Փարիզ, որպես աշխարհի առաջ ուղիղ գծով բացվելու, շրջափակումը ճեղքելու պատգամ: Այնուհետեւ մեր հաջորդական իշխանությունների ռազմավարական գլխավոր խնդիրներից մեկը եղավ օդային բաց սահմանների ապահովումը ամեն գնով: Իսկ հիմա, երկու տարի անց, թեթեւամիտ վերաբերմունքի հետեւանքով հայտնվել ենք եվրոպական օդանավորդության «սեւ» ցուցակներում, օտարերկրյա ավիաընկերությունների եւ Թբիլիսիի ու Մոսկվայի հույսին, այն էլ համավարակի կաշկանդիչ պայմաններում, ավելի սեղմելով պարանը մեր իսկ վզին: Փաստորեն անում ենք այն, ինչը թուրքերն են 28 տարի փորձում անել...

Հյուսիսում շարունակում ենք մնալ Լարսի անցակետի եւ Պավրիայի սահմանադռան հույսին, այսինքն՝ վրացիների եւ այնուհետեւ ռուսների երկշերտ ողորմածության ներքո: Իսկ հարավում, որը ՀՀ հիմնադիր նախագահը ժամանակին իրավամբ կոչել էր «կյանքի ճանապարհ», համարժեք քայլերի բացակայության եւ դիվանագիտական անգործունեության հետեւանքով, մնում է տնայնագործական վիճակում, առավել խոցելի դարձնելով մեր տնտեսական հետագա գործունեությունը, տակավին չխոսելով «տնտեսական հեղափոխության» վերաբերյալ ճամարտակությունների հեռանկարի մասին: Նույնը վերաբերում է «Մետաքսի ճանապարհի» եւ չինական տնտեսական այլազան ծրագրերին միանալու մեր հավակնություններին: Մեկուկես միլիարդ բնակչություն ունեցող այդ երկրում ույղուրական 10 միլիոնանոց համայնքի օգտագործմանը ձգտող պանթյուրքիստական դավադիր ալյանսին մեր երկրի միանալը ինչո՞վ բացատրել, եթե ոչ՝ տգիտությամբ եւ մասամբ նորին:

Վերեւում ակնարկվեց դիվանագիտության անգործությունը: Նախորդ հոդվածում հայտարարել էի, թե տարբեր մայրաքաղաքներում գործող մեր դեսպանատները այժմ վերածվել են հյուրատոսարանների, որոնք ջանում են ինչ-որ կերպ սպասարկել միայն ՀՀ քաղաքացիներին, գրեթե բոլորովին անտեսելով սփյուռքահայությանը, հին թե նոր՝ շուրջ 8 միլիոն մեր ազգակիցներին, չօգտագործել նրանց ուժն ու հնարավորությունները, չընդառաջել նրանց կարիքներին ու պահանջներին: Նո՛յն մայրաքաղաքներում դիվանագիտական ու քարոզչական ճակատամարտում օր-օրի պարտություններ ենք կրում թուրք-ադրբեջանական հարվածների տակ, ոչ միայն արցախյան հարցում, այլեւ միջազգային տարբեր ֆորումներում՝ մեր ազդեցության թուլացմամբ: Ընդամենը պահմտոցի ենք խաղում նույնիսկ ամենաhեղինակավոր ատյանների հետ, մսխելով մեր բարոյական դրամագլուխը:

Խոստովանենք՝ Հայաստանն այլեւս ոչ ոքի չի հետաքրքրում: Ժամանակն է հետ կանչել մեր դեսպանների մեծ մասին. գոնե խնայած կլինենք պետբյուջեի սուղ միջոցները:

Քաղաքական հարաբերություններում մեկուսացման ամենախոշոր ընկրկումը սակայն արձանագրեցինք երկու օր առաջ, երբ երկրի վարչապետը ինչ-որ, բոլոր դեպքերում՝ անհամոզիչ պատճառաբանությամբ, չընդառաջեց Մոսկվայում Մեծ հաղթանակի 75-ամյակի զորահանդեսին ներկա գտնվելու հրավերին: Ես կասեի՝ ճակատագրական վրիպում, որը հետեւանքներ կունենա անպայման: Բոլորին է հայտնի, թե այդ տոնակատարությունը որքան կարեւոր էր Ռուսաստանի ներկա ռեժիմի եւ անձամբ նախագահ Պուտինի համար, որը գտնվում է երկրի սահմանադրությունը «բարեփոխելու» արշավի մեջ: Հրավերից հրաժարվելով, մեր կառավարության եւ ամեն ինչի պետը, փաստորեն, ակամա, իր անհամաձայնությունը հայտնած եղավ Վլադիմիր Պուտինի վերընտրվելու ծրագրին: Ծրագիր՝ որտեղ մենք որեւէ դեր չենք կարող ունենալ: Սա այն դեպքերից է, ուր մեր ներկայությունը թերեւս նկատելի չէր լինի, բայց մեր բացակայությունը կարող է աչք ծակել: Առավել եւս՝ երբ տոնակատարությանը մասնակցում էին ԵԱՏՄ անդամ մյուս բոլոր երկրների պետերը: Եւս առավել՝ երբ հյուրընկալը մեր դաշնակիցն է գործնապես ու պաշտոնապես:

Կա նաեւ մեկ այլ՝ վտանգավոր հանգամանք: Արեւմտյան երկրները հայտնապես բոյկոտեցին այդ տոնակատարությունը, եւ մեր կառավարության պետը չմասնակցելով՝ գործնականապես հայտնվեց բոյկոտողների շարքում, միայն մի վերապահությամբ, որ ռազմական հետախույզների մեր գունդն իր տպավորիչ տողանցումով եւ մեր պաշտպանության նախարարի ներկայությամբ հիշեցրեց, որ մեր ժողովուրդն էլ իր շատ կարեւոր մասնակցությունն է ունեցել ֆաշիզմի ջախջախման գործում:

Բայց դա քիչ մխիթարական է: Անմխիթարը մեր երկրի կատարյալ շրջափակումն է, ինքնաշրջափակումը, ինքնամեկուսացումը:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Թուրքիան Էրդողանի հրահանգով ինքնավար կառույց է ստեղծում, որ հակազդի Ցեղասպանության հայկական պնդումներին

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Թուրքագետ

Հունիսի 23-ին Անկարայում նախագահ Էրդողանի գլխավորությամբ հերթական նիստն է գումարել նախագահականին առընթեր գործող Բարձրագույն խորհրդակցական խորհուրդը: Օրակարգի առաջնահերթ խնդիրն է եղել «Ցեղասպանության հայկական պնդումներին արձագանքելն ու այդ ուղղությամբ ռազմավարություն մշակելու համար քաղաքացիական ինքնավար կառույց ստեղծելը»: Այդ մասին, կայքէջում, որպես «թեժ լուր», նշել է «Հյուրրիյեթ» թերթը **Նուրայ Բաբաջանի** թղթակցությամբ, որից արտատպել է Կ. Պոլսո «Հայ Թերթը»: Ահա թե ինչ է գրել «Հյուրրիյեթի» թղթակցուհին.




«Թուրքիայի արտաքին քաղաքականության օրկարգի առաջնահերթ խնդիրներից այսպես կոչված Ցեղասպանության հայկական պնդումներին արձագանքելու համար քաղաքացիական ինքնավար կառույց ստեղծելու առաջարկն օրակարգ էր մտել դեռեւս երեք ամիս առաջ, երբ ԱՄՆ Կոնգրեսում հայտնվել էր հայկական նոր բանաձեւ եւ ամերիկյան դատարաններում քննարկման էին դրվել հայերի ներկայացրած դատական հայցերը:Սակայն կորոնավիրուսի պատճառով վերոհիշյալ խորհուրդի նիստը հետաձգվեց, այդ իսկ պատճառով այս առաջարկը հնարավոր եղավ քննության առնել վերջին շաբաթներին միայն: Նախագահականի Բարձրագույն խորհրդակցական խորհրդում արված առաջարկի հեղինակներն են խորհրդի անդամ Ջեմիլ Չիչեքն ու նախագահի գլխավոր խորհրդականներից Սեյիդ Սերթչելիքը: Խորհուրդի նիստում ընդգծվել է խնդրո առարկա հարցի առնչությամբ հակափաստարկներ եւ ռազմավարություն մշակող միասնական մեկ կառույցի բացակայությունը: Թեեւ այնտեղ նշվել է առանձին հարցերում տարբեր նախարարությունների մասնագիտական հիմունքներով ձեռնարկած քայլերի մասին, սակայն դրանք չեն հանգեցրել ամբողջական քաղաքականության մշակմանը: Լիբանանի երբեմնի բարգաւաճ համայնքը այս օրերուն կը դիմագրաւէ գոյութենական լուրջ տագնապ:

⇨2

## Զորջ Տոդորովիչ. առաջին սերբահայը՝ Սերբիայի խորհրդարանում

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

Պրահա

Հունիսի 21-ին Սերբիայում անցկացված խորհրդարանական ընտրություններում իշխող՝ Սերբիայի առաջադիմական կուսակցության (SNS) ընտրացուցակով պատգամավոր է ընտրվել հայկական ծագումով 29-ամյա Զորջ Տոդորովիչը: Չնայած երիտասարդ տարիքին, նա նախագահ Ալեքսանդր Վուչիչի գլխավորած կուսակցության ընտրացուցակում գրանցված էր 6-րդ համարի ներքո: 250 պատգամավորներից բաղկացած խորհդարանում առաջադիմականները կզբաղեցնեն 189 տեղ, կամ նախնական տվյալներով՝ գրեթե 65 տոկոսը: Ի դեպ, կորոնավիրուսի համավարակի նվազումից հետո Եվրոպայում առաջին ընտրություններն անցկացվեցին Սերբիայում:



Զորջի հայրը սերբ է, մայրը՝ հայուհի, Կամիլա Մուրադյանը, որ 1990թ ամուսնացել է եւ Երեւանից տեղափոխվել է Բելգրադ: Նա իր երեք զավակներին տվել է հայեցի դաստիարակություն: Զորջը խոսում է նաեւ հայերեն:

Ինչպես անցյալ տարի ՕՐԵՐ ամսագրին տված հարցազրույցում նշեց Զորջը, գերազանցությամբ ավարտել է թե՛ դպրոցը, եւ թե՛ Բելգրադի համալսարանը, ապա դիվանագիտական ակադեմիան: Արդեն իսկ աշխատում է Սերբիայի խորհրդարանի միջազգային հարաբերությունների բաժնում, եւ ամեն կերպ աջակցում է Հայաստանի եւ Սերբիայի հարաբերությունների զարգացմանը: Մասնագիտացել է նաեւ Եվրոպայի խորհրդի հարցերով: Նա երբեք չի թաքցրել իր հայկական ծագումը, եւ միշտ խորհրդարանում շեշտել է, որ ինքը հայ է:

«Երբ ավարտեցի դիվանագիտական ակադեմիան, ցանկությունս էր, որ նվիրվեմ հայ-սերբական հարաբերություններին, իսկ մինչ այդ ցանկանում եմ բարձրանալ սերբական քաղաքականության մեջ, որպեսզի օգնեմ Հայաստանին,- նշել էր մեզ հետ զրույցում Զորջը: Նա ցավով է փաստում, որ սերբական քաղաքականության մեջ մեծ է Ադրբեջանի ազդեցությունը, քանի որ այդ երկիրը փողոցներ ու ճանապարհներ է կառուցում Բելգրադում:

Առջեւում խորհրդարանական գործունեության նոր փուլ է սկսվում՝ արդեն պատգամավորի կարգավիճակում: Կասկած չկա, որ նա լավագույնս իրեն կդրսեւորի նաեւ այստեղ, քանի որ լուսավոր, խելացի եւ հայրենասեր անհատ է: Շնորհավորում ենք եւ մաղթում բեղուն գործունեություն:

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Չափազանցութեամբ եւ մասամբ նորին

Այսօր ֆէյսպուքի վրայ նկարներ տեսայ «Դաւաճաններ» վերտառութեամբ, մօտ 60 պետական մարդոց նկարներ, բոլորն ալ նախկին իշխանութեան գլխաւոր դէմքեր, որոնց կողքին նաեւ Էրտողանի եւ Ալիեւի լուսանկարները:

Ինչ ալ եղած ըլլայ, որքան ալ այդ նկարներուն տէրերը «ապօրինի» գործարքներով զբաղած եւ երկիրը «թալանած» ըլլան, ճիշդ չէ զանոնք թուրքին ու ազերիին հետ հաւասարեցնելը: Ասիկա իմ կարծիքս է: Հայաստանը գրաւել ուզողն ու հայ սպանողին հերոսացնողը բնաւ չի կրնար համեմատուիր մեր յանցաւոր պետական մարդոց հետ:

Անցեալ շաբաթ պատի մը վրայ կաղապարով ներկուած լոզունգ մը ուշադրութիւնս գրաւեց. «Ձեր թաւիշը, մեր դահիճն է» գրուած էր ու քանի որ կաղապարով ներկուած էր, կը նշանակէ որ պիտի ընդհանրանայ շատ մը պատերու վրայ դաջուելով: Մարդիկ արդեօք չարտայայտուած կը մտածե՞ն անոնց հետեւանքներուն մասին: Այնքան վիրաւորական, այնքան վարկաբեկիչ խօսքեր կարդացած եմ ֆէյսպուքի վրայ, որ վայրկեան մը կասկածած եմ հարցերը ընկալելու մեր կարողութեան վրայ:

Չափազանցելը երեւի հայու նկարագրին մաս կը կազմէ: Կը հետեւիմ հայերու խօսակցական, թէ գործնական արտայայտութիւններուն եւ միշտ կը նկատեմ, որ չենք բաւարարուիր ու գոհանար իրականութիւնը մատնանշելով, այլ՝ պիտի չափազանցենք, պարզապէս, որպէսզի մեր խօսածը աւելի համոզիչ դառնայ, մեր արարքը աւելի ազդեցիկ ըլլայ եւ մեր վարկը բարձրացնէ, յաչս շուրջիններուն: Ըսեմ որ այս մէկը աւելի զգալի է հայաստանցիներուն մօտ:

Այստեղ ամէն ինչ չափազանցուած է: Ուրիշ երկիրներ եթէ հիւրին սուրճ մը, կամ օշարակ մը կը հրամցնեն, այստեղ տեսակ-տեսակ միրգերով եւ թխուածքներով լեցուն սեղան կը բանան: Միւս կողմէ, հիւրամեծարութեան հակառակ, եթէ մէկուն հետ հաշիւ ունին, ծեծ ու կռիւ չէ, այլ իրար սպանելու կ'ելլեն: Սովորական հայհոյանքը կը հասնի մինչեւ բ....ի զաւակի, կամ չգիտեմ ինչի «վիժուածքի»:

Նոյնն ալ ազգային-քաղաքական հարցերու մէջ. կա՛մ մէկը գովելով երկինք կը բարձրացնեն, կա՛մ ալ գետնին կը զարնեն ու ոտքի տակ կ'առնեն:

Ընդդիմութիւն ըսուածը, իմ ըմբռնումովս, իր օրէնքներն ու սահմանները ունենալու է: Պարզ է, որ որեւէ կուսակցութիւն ամէն բանէ առաջ կը պայքարի իշխանութիւնը ձեռք անցընելու եւ երկիրը ղեկավարելու համար, միշտ կարծելով, որ ինք աւելի լաւը կրնայ ընել, քան ներկայինը: Սակայն այդ պայքարի ընթացքին ընդդիմադիրները մտածելու են իրենց առած քայլերուն մասին. արդեօք եթէ այսպէս ընենք, երկրին կը վնասե՞նք, արդեօք եթէ այսինչ քայլը առնենք, ժողովուրդին վնաս կը հասնի՞... Վստահ եմ, չեն մտածեր, որուն հետեւանքն ալ ողբերգական կ'ըլլայ:

Դեռ թարմ է այս օրերուն Covid-19 վարակին ստեղծած տագնապալի վիճակը, ուր յստակ է, յանուն մեր առողջութեան պահպանման պետութեան խստապահանջ օրէնքները անտեսողներուն պարագան: Չեն ենթարկուիր, մեծամասնութեամբ կ'անտեսեն, որուն պատճառով օրէ-օր հարիւրաւոր նոր վարակակիրներ մէջտեղ կ'ելլեն ու պետութեան ծանր բեռը աւելի կը ծանրացնեն: Կը քննադատեն իշխանութիւնն ու վարչապետը, յանցանքը բարդելով անոնց վրայ, փոխանակ խելք գործածելու եւ հնազանդելով վարակի տարածման առաջքը առնելու: Բայց, որո՞ւն կ'ըսես: Կը տեսնես երիտասարդութիւնը պարտադրուած դիմակը ապարանջանի պէս թեւերնուն անցուցած կը պտտի, որպէսզի ոստիկաններու հանդիպելու պարագային անմիջապէս քիթ-բերան ծածկեն:

Ընդդիմադիր եղիր, արգելք չկայ, իշխանութիւնը քննադատէ, ազատ ես, սակայն ուշադի՛ր, եթէ աչալուրջ, զգօն, արտցաւ եւ հոգատար քաղաքացի ես, այդ ընթացքին երկրին եւ բնակչութեան վնաս չհասցնես: Այս օրերուն ամէն բանէ առաջ տրամաբանութիւնը պէտք է գործէ:

# Պէյրութի Վ. Թէքէեան վարժարանը ճակատագրական հանգրուանի առջեւ

## *Ամերիկայի Թէքէեան Մշակութային Միութիւնը 60.000 տոլար կը յատկացնէ վարժարանին*

Սփիւռքի համայնքներու փոխ-օգնութեան սկզբունքով՝ մեր համայնքները պարտին ձեռք մեկնել Լիբանանի հայ համայնքին. մանաւանդ որ այդ համայնքը տասնամեակներու ընթացքին մտաւորական, կրթական, գաղափարական սնունդ մատուցած է Արեւմուտքի տկարացող գաղութներուն, կենսաւորելով անոնց վերապրումի պայքարը այլասերման դէմ:



Վերջին տասնամեակներուն զգայացունց տագնապներէ անցաւ լիբանանահայութիւնը, արագացնելով արտագաղթը եւ տկարացնելով համայնքը:

Իբրեւ հետեւանք այդ տագնապներուն՝ ծանրօրէն տուժեց կրթական համակարգը: Փակուեցան կարգ մը վարժարաններ, իսկ Հ.Բ.Ը.Միութիւնը իր հինգ վարժարանները համախմբեց մէկ վարժարանի յարկին տակ. նոյնը պատահեցաւ Ազգային իշխանութեան (եկեղեցւոյ) դպրոցներուն:

Պէյրութի Թէքէեան վարժարանը, որ 70 տարիներէ ի վեր կը գործէ Պուրճ Համուտի հայաշատ շրջանին մէջ, իր հերթին տուժեց ծանրօրէն՝ աշակերտութեան նուազման հետեւանքով: Սակայն, շնորհիւ ծնողներու եւ հոգաբարձութեան հերոսական ճիգերուն, ինչպէս նաեւ ԹՄՄ Հիմնադիրներու մարմնի հովանաւորութեան, վարժարանը պահպանեց իր գոյութիւնը: Ամերիկայի Թէքէեանի շրջանակը եւս բերաւ իր լայն աջակցութիւնը վարժարանին, որ բազմաթիւ ուսեալ սերունդներ պատրաստեց սփիւռքի հայութեան համար:

Այսօր, քորոնաժահրի համաճարակը, միացած Լիբանանի քաղաքական ու տնտեսական տագնապին, ամբողջութեամբ անդամալուծած է հայ համայնքը:

Այս ծանր պայմաններուն ներքեւ ԹՄՄ Հիմնադիրներու մարմինը, Պէյրութէն սիրալիր կոչ մը ուղղած է Ամերիկայի եւ Քանատայի ԹՄՄի Կեդրոնական վարչութեան, ինչպէս նաեւ համայն հայութեան՝ փրկելու վարժարանը անխուսափելի վախճանէ մը:

ԹՄՄի Կեդրոնական վարչութիւնը արդէն փութաց փոխանցել 50,000 ամերիկեան տոլարի գումար մը: Արդէն նախապէս 10,000 տոլար փոխանցուած էր դպրոցին: խոստանալով շարունակել իր օժանդակութիւնը՝ շարունակելու համար այս կրթական փառաւոր հաստատութեան գոյատեւումը:

Այսօր պահն է նաեւ զօրակոչի ենթարկելու Թէքէեան վարժարանի նախկին սաներն ու շրջանաւարտները, որպէսզի վերյիշեն իրենց երբեմնի կրթական մայր օճախը եւ փութան կարելի չափով երկարաձգել անոր գոյութիւնն ու առաքելութիւնը:

Այս կոչը հաւասարապէս ուղղուած պէտք է նկատել բոլոր կրթանուէր հաստատութեանց եւ բարերար անհատներու, որպէսզի տէր կանգնին այս կրթական օճախին, որ գոյութենական սիւներէն մէկը հանդիսացած է 70 տարիներէ ի վեր, հայաշատ Լիբանանի մէջ:

Բոլոր տրազերծ նուիրատուութիւնները կարելի է առաքել Թէքէեան մշակութային միութեան հետեւեալ հասցէին՝ 755 Mt. Auburn Street, Watertown, MA 02472, USA, tekeyan@aol.com, 1-617-924-4420:

Հանգանակուած գումարները պիտի բարդուին Կեդրոնական վարչութեան ապագայ յատկացումներուն եւ ամբողջութեամբ պիտի տրամադրուին Պէյրութի Վահան Թէքէեան վարժարանին:

**ԹԷՔԷԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԵՒ ՔԱՆԱՏԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**Պոստոն, յունիս 20, 2020**

# «Հայկական եկեղեցիներ». Լեւոն Լաճիկյանի գծանկար բացիկների նոր հավաքածու

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

**Գյումրի**

**«Շենքերն ինձ համար քարե անշունչ կառույցներ չեն: Դրանք ավելի շատ մարդկային ոգու ամրոցներ են, միջավայր կերտող, բնավորություն ու մտածողություն կազմավորող...»: Գեղագետ, արվեստաբան, գծանկարիչ Լեւոն Լաճիկյանի այս հայացքն առկա է նաեւ վերջին տարիներին նրա ստեղծած գրաֆիկական պատկերներում, որտեղ ուրույն հմայքով են ներկայանում արվեստագետի ծննդավայր քաղաքը («Գյումրի, իմ սեր» հավաքածու)՝ իր շենքերով ու տեսարաններով, պատկերներ Գորիսից ու Տավուշից, Պոլսից ու Վենետիկից, հայոց եկեղեցիների ճարտարապետական արվեստը:**




**«Էդիթ պրինտ» հրատարակչությունը վերջերս լույս է ընծայել Լաճիկյանի «Հայկական եկեղեցիներ» գծանկար բացիկների հավաքածուն, որտեղ ընդգրկվել են նրա այս թեմայով գործերից 24-ը: Նուրբ արվեստով ներկայացող այդ նկարաշարը ընդհանուր հետաքրքրությունից բացի նաեւ որոշակի պատկերացում է տալիս հայ եկեղեցաշինական արվեստի զարգացման փուլերի մասին: Տարբեր դարերում ստեղծված մեր եկեղեցական կառույցներից շատերը, ինչպես տեղին նշվում է հրատարակությանը կից համառոտ ծանոթագրությունում, իրենց բացառիկությամբ դուրս են եկել ազգային մշակույթի շրջանակներից եւ դարձել համաքրիստոնեական ճարտարապետության ու արվեստի գլուխգործոցներ: Իսկ պատմական հանգամանքների բերումով դրանց աշխարհագրությունը տարածվել է նաեւ Հայաստանի սահմաններից շատ հեռու: Այս վերջին կարգի կառույցներից մի քանիսի պատկերները եւս ընդգրկված են հավաքածուում:**

**Լեւոն Լաճիկյանի «Հայկական եկեղեցիների» ներկայացրած ժանրային ու գեղարվեստական նորությանը գումարվում է բացիկներից յուրաքանչյուրի դարձերեսին տվյալ եկեղեցական կառույցի հակիրճ նկարագրականը հայերեն եւ անգլերեն: Անշուշտ, դա մեծացնում է այս հավաքածուի ճանաչողական նշանակությունն ու արժեքը:**

**Նորատիպ հավաքածուի խմբագիրն է պատմական գիտությունների դոկտոր, Մատենադարանի փոխտնօրեն Կարեն Մաթեւոսյանը:**

# Թուրքիան Էրդողանի հրահանգով...

⇨1 Նիստի ավարտին տված ճեպազրույցում **Չիչեկն** ու **Սերթչելիքը** լրագրողներին ասել են, որ հայկական լոբբին, ելնելով մերժման հավանականությունից, խուսափում է հարցը բարձրացնել Արդարադատության միջազգային դատարանում, նախընտրելով լոբբիստական գործունեության մեջ «ցեղասպանության» փոխարեն օգտագործել «մարդկության դեմ հանցագործություն» արտահայտությունը, որ կարողանա փոխել նախկին ռազմավարությունը: Նիստը քննարկել է նաեւ թուրքական հինգ տարբեր համալսարանների համատեղ պատրաստած զեկույցը:Նախագահ Էրդողանը հավանություն է տվել ինչպես առաջարկին, այնպես էլ զեկույցին եւ կարգադրել է օր առաջ ավարտել հայերի պնդումներին հակադարձելու նպատակով նախատեսվող աշխատանքները»:

Նիստի վերջում, ըստ «Հյուրրիյեթի» թղթակցուհի Բաբաջանի, մասնակիցները նշել են, որ ցեղասպանության հայկական պնդումների հարցով զբաղվում էր Ազգային անվտանգության խորհուրդը, սակայն 2015-ին, երբ օրենքի փոփոխության հետեւանքով հարցը հանվեց խորհրդի իրավասությունից եւ հանձնվեց վարչապետարանին առընթեր գործող «Նորագույն պատմության ուսումնասիրության կենտրոնի» իրավասությանը, շուտով Թուրքիան խորհրդարանական համակարգից անցավ նախագահականի: Այսպիսով դադարեց վարչապետասարանի գործունեությունը, դրա հետ վերացավ նաեւ նշված կենտրոնը, ինչն անհրաժեշտ դարձրեց միասնական մի կառույցի ստեղծումը, որ զբաղվի ոչ միայն հարցի քաղաքական, այլեւ մշակութային, պատմական, քարոզչական եւ իրավական հայեցակարգերով: Նիստում մասնակիցները եկել են ընդհանուր հայտարարի, որ այդ կառույցը լինի ինքնավար, կառավարությունից ու պետությունից անկախ քաղաքացիական մի կառույց:

Որքան էլ «Հյուրրիյեթի» հրապարակման մեջ Բարձրագույն խորհրդակցական խորհրդի հունիսի 23-ի նիստում ընդունված որոշումները պայմանավորվեն «ցեղասպանության հարցում հայերի ռազմավարության փոփոխության հետ», թե «ցեղասպանության» փոխարեն սկսել են օգտագործել «մարդկության դեմ հանցագործություն» արտահայտությունը, իրականում դրա հիմքում ընկած է հունիսի 22-ին Ժնեւում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 43-րդ նստաշրջանում Հայաստանի նախաձեռնությամբ Ցեղասպանության կանխարգելման բանաձեւի ընդունումը: Քանի դեռ ծավալվում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը մենք հայերս ռազմավարություն փոխելու կարիք չունենք, թուրքերն էլ՝ նստաշրջանի ընդունած բանաձեւը չեղյալ հայտարարելու հնարավորություն: Այդ իսկ պատճառով նիստ են գումարել, որ եթե ոչ հակազդել, գոնե ինչ-որ ձեւով արձագանքեն, որպեսզի Հայաստանի առջեւ ընկրկելու տպավորություն չստեղծվի:

# Թուրքիայի օսմանյան նկրտումները թիրախավորում են Լիբանանի հայերին

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ
Դետրոյթ, ԱՄՆ

Մինչ Հայաստանի բնակչությունը ճգնաժամի մեջ մեկ ուրիշ ճգնաժամ է ապրում, ինչը նշանակում է քաղաքական անկայունություն կորոնավիրուսի համավարակի ժամանակ, Լիբանանում հայերը բախվում են եռակի ճգնաժամի՝ համավարակի ընթացքում տնտեսական խոցելիություն ի հավելումն թուրքական տարրերի հետ հակամարտության:

Հունիսի 11-ին Բեյրութի մահմեդական թաղամասում կազմակերպվեց ցույց հայերի դեմ ուղղված կարգախոսներով՝ թուրքական եւ լիբանանյան դրոշների ուղեկցությամբ: Դա անսպասելի պոռթկում էր հայերի դեմ, թեեւ վաղուց ենթադրելի էր տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումների առումով:

Նախորդ դարավերջին Ցեղասպանությունից հետո Լիբանանում ընդունեցին հայերին, քանի որ երկրի բնիկ ժողովուրդը՝ մահմեդական թե քրիստոնյա, նույնպես Օսմանյան կայսրության դաժան տիրապետության տակ էր եղել մոտ 400 տարի:

Մինչ հայ քաղաքական գործիչներն ու մտավորականները Ստամբուլում կախաղանի վրա կորցրին իրենց կյանքը, Դամասկոսի եւ Բեյրութի մտավորական վերնախավը արժանացավ նույն ճակատագրին: Մինչեւ օրս Բեյրութի գլխավոր հրապարակը կոչվում է Նահատակների հրապարակ, որտեղ այն ժամանակվա Մեծ Սիրիայի մտավորականները կախաղան էին հանվել 1915 թվականին: (Ի դեպ, Լիբանանի Օսմանյան վերջին կառավարիչը ծագումով հայ էր՝ Հովհաննես Կույումջյան անունով):

Ուստի լիբանանցիների եւ հայերի միջեւ առկա էր փոխըմբռնում, երբ վերջիններս նշեցին իրենց նահատակների հիշատակը: Ապրիլի 24-ի հիշատակումների ընթացքում ամբողջ երկիրը նույնիսկ փակվել է ի համերաշխություն հայ համայնքի հետ: Դա շարունակվեց մինչեւ անցյալ տարի, երբ ամենամյա հիշատակի երեկոն բախվեց թշնամական հակացույցերի, որոնք անցկացնում էին սուննի ծայրահեղական հոգեւորականները Բեյրութի թուրքական դեսպանատան հրահրմամբ:

Հայերը սկզբնական շրջանում բնակություն հաստատեցին Լիբանանի հյուղավաններում եւ ժամանակի ընթացքում դարձան երկրի առավել բարեկեցիկ համայնքներից մեկը: Հայերը Լիբանանին վերադարձրին այնքան, որքան ստացել էին, քանի որ նրանք տեղի առավել աշխատասեր համայնքներից մեկն էին մասնագիտությունների, կրթության, արվեստի, ձեռներեցության մեջ եւ այլն: Այսպիսով նրանք զբաղեցրին իրենց օրինական տեղը լիբանանյան հասարակության մեջ:

Ի դեպ, լիբանանահայությունը, մանրակրկիտ մշակված կրթական համակարգի շնորհիվ, մանկավարժներ, հոգեւորականներ, հրատարակիչներ, գրողներ եւ քաղաքական առաջնորդներ արտահանեց աշխարհի հայ համայնքներ:

Վերջապես, հայերը ներգրավվեցին Լիբանանի քաղաքական գործընթացների մեջ, ի տարբերություն շատ ուրիշ երկրների, որովհետեւ լիբանանյան համակարգը հիմնված է քաղաքական ուժի միջդավանանքային բաշխման վրա: Խորհրդարանում ներկայացված է 18 կրոնական խմբակցություն: Այսօր կան վեց հայ խորհրդարանականներ եւ կառավարության մեկ հայ նախարար:

Վերջին երեք տասնամյակերի ընթացքում քաղաքական ցնցումները բազմաթիվ հայերի ստիպեցին արտագաղթել Եվրոպա, Ամերիկա, Ավստրալիա, որի հետեւանքով կրթական համակարգը տուժեց եւ սոցիալական կյանքը վատթարացավ: Ահա թե ինչպես համայնքն ավելի խոցելի դարձավ:

Մի ժամանակ Լիբանանը համարվում էր Մերձավոր Արեւելքի զարդը, իր գեղեցկությամբ եւ աշխույժ ու կենսասեր հասարակությամբ, բանկային համակարգով, գերազանց գործարար մթնոլորտով եւ այլն: Բայց երկու քաղաքացիական պատերազմները եւ քաղաքական խժդժությունները անկայունացրին ամբողջ երկիրը, որը քաղաքականապես եւ սոցիալապես կազմալուծվեց: Երկար ժամանակ Լիբանանը ծառայում էր որպես մերձավորարեւելյան բոլոր քաղաքական հակամարտությունների միջնորդ: Տարածաշրջանային եւ համաշխարհային տերությունների մեծ մասը փորձում էր այնտեղ լուծել սեփական խնդիրները:

Այս բոլոր փոխակերպումները տեղի ունեցան, քանի որ խոշոր տերությունները փորձեցին որոշակի քաղաքականություն պարտադրել Լիբանանին: Դարեր շարունակ, չնայած ժողովրդագրական տեսանելի սահմանազատումներին, ոչ անպայման կրոնական պատճառներով, խոշոր տերությունները օգտագործում էին կրոնական հակասությունները, որպեսզի ուժային դաշինքները հանեն միմյանց դեմ, եւ դա իր արտացոլումն էր գտնում Լիբանանում:

Սուննիների կրոնական վերածնունդը խրախուսվում էր հակադրվել շիա Իրանին՝ Լիբանանում գործող «Հզբոլլահ» հզոր խմբավորման մայր երկրին: ԱՄՆ-ի կողմից ստեղծվեց արհեստական սուննի դաշինք, որը փորձում էր արաբներին համոզել, որ թշնամին Իրանն է, մինչդեռ իրականում պաղեստինցի արաբները տառապում էին իսրայելական օկուպացումից:

Եգիպտոսը եւ Արաբական Միացյալ Էմիրությունները Իրանը զսպելու նպատակով մեկ դաշինք էին կազմել Սաուդյան Արաբիայի դժկամ ղեկավարության ներքո: ԱՄՆ-ը փորձեց Սաուդյան Արաբիային պարտադրել փոխադարձ բացառիկության քաղաքականություն, որը դատապարտված էր ձախողման, քանի որ հենց սկզբից Ռիադին հանձնարարվեց ղեկավարել սուննի դաշինքը, իսկ մյուս կողմից դա համապատասխանում էր Իսրայելի շահերին: Այդուհանդերձ պաղեստինցիներին սաուդցիների տնտեսական ու քաղաքական նվազող աջակցությունը վերջիններիս որպես սուննի առաջնորդ որակազրկեց հասարակ արաբ ժողովրդի աչքին: Ահա թե որտեղ ու երբ էր, որ Թուրքիան միջամտեց:

Թուրքիայի օսմանյան նկրտումները իրական նախագիծ եւ սպառնալիք են հարեւան երկրների համար: Թուրքիան միշտ անհրաժեշտ չարիքի դեր է խաղացել ՆԱՏՕ-ի համար: Հենց որ ծագում էին չարանենգ ծրագրեր, դրանց իրականացումը հանձնարարվում էր Անկարային: Դրա դիմաց Արեւմուտքը շռայլորեն վարձատրում էր Թուրքիային տնտեսական արտոնություններով եւ ռազմական տեխնիկայով: Ահա թե ինչպես ՆԱՏՕ-ի կազմում Թուրքիան ունեցավ երկրորդ խոշորագույն բանակը՝ միաժամանակ ձեւացնելով, թե իրականացնում է ՆԱՏՕ-ի առաքելությունները: Իրականում Թուրքիան միտված է եղել միայն իր քաղաքական օրակարգի իրականացմանը: Այսօր նա հասել է մի կետի, երբ կարող է մարտահրավեր նետել իր դաշնակիցներին, այդ թվում՝ ԱՄՆ-ին: Թուրքիան ռազմակայաններ ունի Սոմալիում, Քաթարում եւ Լիբիայում եւ անցանկալի հյուր է Կիպրոսում, Իրանում եւ Սիրիայում:

Քանի որ Սաուդյան Արաբիան չկարողացավ ստանձնել սուննի աշխարհի ղեկավարությունը, Թուրքիան պայքարում է այդ տեղը զբաղեցնելու համար: Նա աջակցում է պաղեստինցիների մոռացված գործին՝ երբեմն վիճաբանության մեջ մտնելով Իսրայելի հետ եւ միեւնույն ժամանակ հանգիստ շարունակելով իր ռազմական եւ տնտեսական համագործակցությունը: Թուրքիայի հակաիսրայելական հռետորաբանությունը իրական խնդիր կդառնա լոկ այն ժամանակ, երբ Իսրայելը որոշի ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Թուրքիան Լիբանան է թափանցել իր հեռուստածրագրերի, լրատվամիջոցների եւ սոցիալական ծառայությունների միջոցով: Նա ընդօրինակել է Եգիպտոսի «Մուսուլման եղբայրներ» շարժմանը, որը լայն ցանց էր զարգացրել՝ կարիքավորներին տրամադրելով միջոցներ, դեղորայք, կրթություն եւ այլ սոցիալական ծառայություններ: Նույն մեթոդները կիրառելով՝ Թուրքիան վերահսկողություն է հաստատել Լիբանանի հյուսիսում, մասնավորապես Տրիպոլիում, որտեղից տարածում է իր շոշափուկներն ամբողջ երկրում:

Թուրքիան Իսրայելի եւ սուննի աշխարհի հետ մեկտեղ ընդհանուր նպատակ ունի՝ Լիբանանում պայքարել «Հզբոլլահի» դեմ: «Հզբոլլահը» թե՛ աշխարհազոր է, եւ թե՛ քաղաքական հուժկու ուժ, որն իշխում է Լիբանանի քաղաքականության մեջ: Դա հյուսիսում անհանգստացնող հանգամանք է Իսրայելի համար, քանի որ ստիպել է իսրայելական ուժերը դուրս բերել լիբանանյան հողից: Ավելին, Սիրիական պատերազմի ժամանակ «Հզբոլլահը» հանդես եկավ որպես արդյունավետ մարտական ուժ:

Այսօր ԱՄՆ-ը պատրաստ է Լիբանանը կազմալուծել՝ «Հզբոլլահից» ազատվելու համար: Հայերեն ասացվածքի համաձայն, նա փորձում է այրել գորգը՝ միջատից ազատվելու համար:

Թուրքական ներկայությունը վաղուց էր զգացվում Լիբանանում, եւ միայն մեկ կայծը բավարար եղավ դրա ամբողջական դրսեւորման համար:

Դեպքը տեղի ունեցավ հունիսի 11-ին, երբ հաղորդավար Նշան Տեր-Հարությունյանը «Ալ-Ջադիդ» հեռուստաալիքի եթերում հարցազրույց էր վերցնում նախկին նախարար Դույամ Ռահանից: Երբ հղում արվեց Էրդողանին եւ Լիբանանում Թուրքիայի ստոր քաղաքականությանը, վիրավորական հաղորդագրություն ստացվեց Տեր-Հարությունյանի Whats App հավելվածում: Նա զայրացած պատասխանեց, եւ, անսպասելիորեն, շատ կարճ ժամանակամիջոցում ավտոմեքենաների մի ամբողջ շարասյուն շրջապատեց հեռուստաընկերության շենքը: Սկսեցին հնչել հակահայկական կարգախոսներ:

Թրքամետ խմբավորումը կոչվում է Մարդինլի եւ ծագում է Թուրքիայի Մարդին քաղաքից (ասորիների նախկին հենակետը): Խմբավորման առաջնորդ Մունիր Հասունը հաղորդագրություն է տեղադրել իր ֆեյսբուքյան էջում՝ արդարացնելով Հայոց ցեղասպանությունը:

Միջադեպը ցնցեց հայ համայնքը: Խորհրդարանի հայ պատգամավորներից մեկը՝ Հակոբ Բագրատունին, դիմեց ներքին գործերի նախարարին: Հայկական երեք քաղաքական ուժերը՝ Ռամկավար ազատական կուսակցությունը (ՌԱԿ), Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ) եւ Հնչակյանները հանդես եկան հայտարարությամբ՝ ափսոսանք հայտնելով կատարվածի համար:

Խմբի նախագահ Հասունը տարբեր ժամանակներում հայտարարել է, որ ինքը թուրք է, քուրդ է եւ քրիստոնյա: Սակայն մի բան հաստատ է, որ նա այն վարձկաններից է, որոնց Թուրքիան Սիրիա, Լիբիա եւ Լիբանան է ուղարկել իրենց կեղտոտ գործը կատարելու:

Հայերը վերջին անգամ նման սպառնալիքի բախվել էին 1982 թվականին՝ Լիբանանի քաղաքացիական պատերազմի ժամանակ: Հայ համայնքը պատերազմի ընթացքում դրական չեզոքության քաղաքականություն էր որդեգրել՝ ի դժգոհություն քրիստոնեական ուժերի: Այդ ժամանակ Իսրայելի պաշտպանության նախարար Արիել Շարոնը իսրայելական բանակը երթով անցկացրեց Լիբանանի փողոցներով՝ թույլ տալով, որ քրիստոնյա ֆալանգիստների ուժերը պաղեստինցի գաղթականներին մորթեն Սաբրա եւ Շաթիլա ճամբարներում:

Մարոնիտների ֆալանգիստական ուժերի առաջնորդ Բաշիր Ժմայելը իսրայելական զենքի ուժով ընտրվեց նախագահ եւ սպանվեց մի քանի շաբաթ անց: Նրան հաջորդեց եղբայրը՝ Ամին Ժմայելը, որը ընտրվելուց առաջ մի պահ սպառնաց ներխուժել հայկական թաղամասեր: Պահանջվեցին Հռոմի պապի, ԱՄՆ Պետդեպարտամենտի եւ հայ փաստաբանական խմբերի միացյալ ջանքերը, որոնք ՄԱԿ-ում հանդիպում ունեցան՝ սպանդը դադարեցնելու նպատակով: (*)

Այսօր Լիբանանում հայերն ավելի խոցելի են, քան երբեւէ, քանի որ մեծացել է Թուրքիայի դերը Մերձավոր Արեւելքում, եւ, մասնավորապես, Լիբանանում:

Քրդական որոշ խմբեր իրենց աջակցությունն են առաջարկել հայերին: Սակայն քրդերի հետ դաշինքը կարող է միայն վատթարացնել իրավիճակը: Ներկայումս թուրքական ուժերը կոտորում են քրդերին Իրաքում եւ Թուրքիայում: Խոհեմ չի լինի այդ մահաբեր ազդակը ներմուծել Լիբանան:

Ներկայումս հայերը հայտնվել են անկայուն վիճակում՝ կախման մեջ լինելով անտեսանելի քաղաքական ուժի բարեհաճությունից: Նախագահ Էրդողանն ունի գլխավոր նախագիծ, եւ կարծես թե որեւէ մեկը ի վիճակի չէ խանգարելու նրան: Նա քանիցս կրկնել է, որ Հայաստանը խոչընդոտ է Կենտրոնական Ասիա հասնելու եւ թյուրքալեզու ժողովուրդներին միավորելու համար:

Սա երազանք է, որը Էնվեր Փաշան չկարողացավ իրականացնել Առաջին աշխարհամարտի ավարտին: Էրդողանը կշարունակի հասնել նույն երազանքի իրականացմանը նույնիսկ եթե երկրորդ ցեղասպանություն պահանջվի Հայաստանը նվաճելու համար: Nordic Monitor հրատարակությունը հայտնաբերել է թուրքական մի փաստաթուղթ, որտեղ նշված են 2014 թվականին Հունաստան եւ Հայաստան ներխուժելու ծրագրերը: Հայաստան ներխուժելու ծրագիրը կոչվում է Ալթայ: Դա զարմանալի չէ՝ նկատի ունենալով, որ ոչ վաղ անցյալում Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալը բարձրաձայնել էր իր երկրի ծրագրերը՝ սպառնալով ռմբակոծել Երեւանը:

Սիրիական պատերազմի ժամանակ թուրք վարձկանները ավերեցին Քեսաբը եւ շրջակա առավելապես հայաբնակ գյուղերը: Նմանապես նրանք ռմբակոծեցին Դեր Զորի Նահատակների հուշահամալիրը: Այսօր նրանք սպառնում են Լիբանանի հայերին: Հնարավոր է, որ նրանց հաջորդ թիրախը լինի Հայաստանը:

**) Վճռական դերը կատարեց Խ. Միությունը. ՏԱՍՍ գործակալությունը տարածեց խիստ նախազգուշացում, իսկ այդ ժամանակ Լիբանանում գտնվող սիրիական դիրքերից ծանր ռմբակոծում սկսվեց ֆալանգիստական ուժերի վրա: «Ազգ»:*

**Armenian Mirror-Spectator**
**Անգլ. թարգմ ԱՐԵՎԻԿ ՔԵՇԻՇՅԱՆԸ**



# Ինչպե՞ս փոխվեց գազի սակագինը եւ ի՞նչ հետեւանքներ դա կունենա

ՄԱՆՈՒԿ ԱՐԱՄՅԱՆ

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը վերջապես հաստատեց բնակչության եւ տնտեսվարողների համար գազի սակագինը, որը ուժի մեջ կմտնի հուլիսի 19-ից: **Բնակչության համար այն մնաց 139 դրամ 1 խմ համար, իսկ սոցիալապես անապահով խավի համար 100 դրամ՝ 1 խմ համար մինչեւ 600 խմ սպառած գազի համար:** Հիշեցնենք, թե ի՞նչ առաջարկ էր ներկայացրել «Գազպրոմ Արմենիան»:

«Գազպրոմ Արմենիան» հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով էր դիմել հուլիսի 1-ից Հայաստանի Հանրապետությունում սպառողներին վաճառվող բնական գազի սակագնի վերանայման հետեւյալ հայտով.

1. Ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք ունեցող սպառողներին տարեկան մինչեւ 600 խորանարդ մետր բնական գազի համար՝ վաճառվող յուրաքանչյուր խորանարդ մետր բնական գազի գործող սակագինը ներկայիս 100 դրամից դարձնել 135,9 դրամ: **Այսինքն, սակագինը բարձրացնել 35,9 դրամով:**

2. Ամսական մինչեւ 10 հազար խորանարդ մետր սպառում ունեցող սպառողներին, որոնք ընդգրկված չեն սոցիալական նպաստների համակարգում, այսինքն բնակչությանը վաճառվող յուրաքանչյուր խորանարդ մետր բնական գազի գործող սակագինը ներկայիս 139 դրամից դարձնել 135,9 դրամ: **Այսինքն, սակագինը իջեցնել 3,1 դրամով:**

Հայաստանի կառավարությունը սրան համաձայն չէր, չնայած բնակչության մեծամասնության համար գազի սակագնի նվազում էր: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ:

Առաջին պատճառն ավելի քան պարզ էր՝ վարչապետ Փաշինյանը չէր կարող դա ներկայացնել որպես իր ձեռքբերում, քանի որ դա ռուսական կողմի առաջարկն էր եւ, երկրորդ, քանի որ նրա ասածին հակադրվելու էր անապահով խավի համար գազի սակագնի բարձրացումը:

Երկրորդ պատճառն այն է, որ գազի սակագինը նույնը պահպանելով եւ թույլ չտալով, որ այն նվազի բնակչության մեծ մասի համար, անապահով խավի համար սահմանված ցածր սակագնի սուբսիդավորումը շարունակելու է իր վրա վերցնել ռուսական կողմը: Հակառակ դեպքում, Հայաստանի կառավարությունը ստիպված կլիներ այդ գումարը փոխհատուցել պետական բյուջեի արագորեն նվազող եկամուտներից: **Արդյունքում, անապահով խավի համար սահմանված էժան գազի սակագնի տարբերությունը մնաց ռուսական կողմի, փաստացի՝ «Գազպրոմ Արմենիայի» ֆինանսավորման վրա: Սա ի գիտություն արեւմտյան դրամաշնորհներով սնվողների, որոնց գլխավոր «առաքելությունը» Հայաստանում հակառուսական արշավ տանելն է:**

Հիշեցնենք նաեւ, որ վերջին անգամ «Գազպրոմ Արմենիան» գազի սակագնի վերանայման՝ տվյալ դեպքում նվազեցման հայտով դիմել էր 2016 թ.-ին: **Ըստ ընկերության առաջարկի, 146,7 դրամի փոխարեն Հայաստանին մատակարարվող գազի սակագինը 2017 թ.-ի հունվարից դարձավ 139 դրամ**: Բացի դրանից, այն ժամանակ «Գազպրոմ Արմենիան» առաջին անգամ տարբերակված մոտեցում եւ արտոնյալ սակագին սահմանեց երեք խումբ սպառողների համար: Ինչը այն ժամանակվա՝ Կարեն Կարապետյան գլխավորած կառավարության ջանքերի արդյունքն էր:

Այդ խմբերից առաջինը վերոնշյալ սոցիալապես անապահով խավն էր, որին մատակարարվող գազի սակագինը 2017 թ.-ի հունվարից դարձավ 100 դրամ:

Արտոնյալ գազի սակագնով գործող երկրորդ եւ երրորդ տարբերակված սպառողական խմբերը ջերմոցային տնտեսությունների եւ վերամշակող ձեռնարկությունները էին, որոնց համար սակագինը 212 դոլար էր 1000 խմ գազի համար: Ռուսական կողմն առաջարկել է բարձրացնել նախկինում արտոնյալ այս խմբերի սակագինը՝ դարձնելով այն 283 դոլար 1000 խմ համար: Արդյունքում, որոշվել է, որ ջերմոցային տնտեսությունների եւ վերամշակող պահածոների, խմիչքների եւ կաթնամթերքի արտադրությունների համար սահմանված գազի սակագինը կբարձրանա հետեւյալ կերպ՝ նոյեմբերի 1-ից մինչեւ մարտի 31-ը 212 դոլարի փոխարեն 224 դոլար, իսկ ապրիլի 1-ից մինչեւ հոկտեմբերի 30-ը՝ մինչեւ 10 հազար խմ-ի դեպքում 139 դրամ 1 խմ համար, իսկ այդ ծավալը գերազանցելուց հետո յուրաքանչյուր 1000 խմ համար՝ 255,9 դոլար:

**Ակնհայտ է, որ սակագների այս բարձրացման հետեւանքով մեր գյուղմթերքի եւ սննդամթերքի արտադրության ինքնարժեքը կբարձրանա, ինչը կարող է բերել նաեւ նրա թանկացմանը:** Հայկական ապրանքների ինքնարժեքի բարձրացումը կբերի ներմուծվող համանման ապրանքների դիրքերի բարելավմանը մեր ներքին շուկայում, հայկական արտադրությունների վիճակի վատթարացմանը՝ դրանից բխող տնտեսական եւ սոցիալական բացասական հետեւանքներով: Միաժամանակ, հայկական ապրանքների մրցունակությունը կիջնի նաեւ արտահանման ժամանակ:

Ինչ մնում է խոշոր՝ 10 հազար խմ եւ ավելի գազ սպառողներին՝ այդ թվում ջերմաէլեկտրակայաններին, ապա նրանց համար նույնպես սակագինը բարձրանալու է: Ներկայումս այն 242 դոլար է 1000 խմ համար: Օգոստոսի 1-ից նրանց համար մինչեւ 10 հազար խմ սպառման սակագինը լինելու է 139 դրամ 1 խմ համար, իսկ դրանից ավելի սպառված յուրաքանչյուր 1000 խմ գինը՝ 255,9 դոլար: **Դա կարող է հանգեցնել էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմանը, քանի որ ջերմակայաններում է արտադրվում էլեկտրական էներգիայի շուրջ 40 տոկոսը:**

Ամփոփելով վերոնշյալը հարկ է արձանագրել.

1. Հայ-ռուսական հարաբերությունները, հակառակ վարչապետի հավաստիացումների, փայլուն չեն: Եթե փայլուն լինեին, մենք կունենայինք գազի սակագնային այլ առաջարկներ՝ ինչպես օրինակ ունեցանք 2016 թ.-ին:

2. Մենք ինքներս ենք մեղավոր ստեղծված իրավիճակում, քանի որ նախընտրեցինք դատարկ խոստումները, այդ թվում գազի սակագների մասով:

# Մեղքը կորոնավիրուսի վրա չգցենք

ՆԱԻՐ ՅԱՆ

Ես ՀՀ շարքային քաղաքացի եմ, կին, մայր, դուստր եւ լրագրող: Այսինքն՝ մասնագիտության բերումով՝ միշտ եղել եմ տեղեկատվության ակունքներում: Մարտից սկսած՝ աշխատանքային օրս մեկնարկում է կորոնավիրուսի նոր դեպքերի մասին տեղեկություն գրելով, որը ներառում է համապարփակ ինֆորմացիա՝ առողջացածներ, թեստ հանձնածներ, մահեր: Ուրեմն եւ, 4 ամիս ամեն օրս սկվում է բացասական լիցքերով: Բացասական լիցքերով ես ինձ դրսեւորում եմ որպես ՀՀ շարքային քաղաքացի, կին, մայր եւ դուստր: Եվ ինձ նման տասնյակ լրագրողներ նույն իրավիճակում են: Ինձ նման հազարավոր մայրեր, կանայք, դուստրեր, շարքային քաղաքացիներ նույն իրավիճակում են: Մեր՝ լրագրողներիս հաղորդած նորությունները, տեղեկությունները մտնում են յուրաքանչյուր տուն, տակնուվրա անում յուրաքանչյուրի ներաշխարհը, ամեն օր տասնապատկում համազգային, համաժողովրդական ու համամարդկային սթրեսը, տագնապը, լարվածությունը: Կորոնավիրուսի պատկերն ահագնանում է, օրվա մահերն արձանագրող թվերը ճզմում են մեր ուղեղն ու նյարդային համակարգը: Սոցիալ-տնտեսական ճգնաժամը սպառնում է սողոսկել յուրաքանչյուրիս տուն, այս ամենին գումարած՝ հրապարակվում են միայն վատ լուրեր ու բոթեր՝ ավտովթար, սպանություններ, բռնություն, հակահամաճարակային կանոնները չպահպանելու համար՝ տուգանքներ, արգելքներ... «կրեք դիմակ, փրկեք կյանքեր», «կրեք, որ կրենք» կարգախոսով դիմակաբաժան ակցիաներ, փողոցներում վարչապետի ու պարետի հրահանգների համասփյուռ ձայնագրություններ՝ զուգակցված ոստիկանության ու շտապօգնության մեքենաների բարձրագոչ ազդանշաններով: Այս ամենը դեռ ոչինչ, սովորել ենք, վարժվել, մեր կենսակերպի անբաժան մասն են դարձել, բայց սրանց ավելացնել նաեւ դատավարությունների, խորհրդարանական քաշքշուկների, գզվռտոցների անընդմեջ ագրեսիան, ատելության մթնոլորտը պարոնայք իշխանավորներ, սա երկիր է, պետություն, հայրենիք եւ ոչ թե հարմար տարածք՝ դժոխքը վերարտադրելու համար:



Առանց այդ էլ կորոնավիրուսը բոլորիս սթրեսի ու տագնապի մեջ է պահում, դեռ որքա՞ն եք շարունակելու այդ սթրեսին ավելացնել քաղաքական հակամարտությունների բացասական ազդակներն ու լիցքերը: Չկա հանրային, ընտանեկան, քաղաքացիական կյանք, ուղղակի չկա, գոյություն չունի, վերացել է, որովհետեւ մեր ամեն օրը բացվում է կորոնավիրուսի ու հերթական դատավարության հետ: Եվ այս ահռելի բեռը, հոգեկան ու բարոյական կտտանքները մեղմող, հավասարակշռող այլընտրանք չկա:

Արդեն 4 ամիս մենք չենք ստանում հոգեւոր սնունդ քաղաքական, սոցիալական, դատաիրավական ծանր հրետանին ամեն օր ուղղում եք հանրության վրա եւ փոխարենը ոչ մի փոխհատուցում չեք առաջարկում: Մարդիկ կինո, թատրոն, համերգ չեն գնում, զրկվել են մշակութային կյանքից, որը, իհարկե, բացասական լիցքերը չեզոքացնելու զորավոր միջոց է: Այս սոսկալի իրավիճակը հաշվի չառնելով՝ ամեն վայրկյան ժողովրդին դարձնել ագրեսիայի, բացասական լիցքերի, սթրեսների թիրախ, կորոնովիրուսի սարսափի հետ նրան կերակրել նաեւ դատավարությունների, քաղաքական հաշվեհարդարների ինտրիգներով՝ ազնիվ չէ, հեչ ազնիվ չէ:

Անգամ հոգեբաններն են խոստովանում, որ իրենք հոգեբանի կարիք ունեն: Սա աննախադեպ իրավիճակ է, որը նաեւ քաղաքական փոխհարձգության թիրախ է դարձրել սովորական քաղաքացուն: Պետք եղած ժամանակ հանրությունը խրամատ է, որտեղից քաղաքական հակառակորդները կրակում են իրար վրա, հաջորդ պահին այդ նույն հանրությունը ծանր հրետանի է, որը գործածվում է քաղաքական հակառակորդին ոչնչացնելու համար: Եվ այս ամենի մեջ միակ տուժողն, ինչպես միշտ, այդ նույն հանրությունն է, ժողովուրդը՝ ՀՀ շարքային քաղաքացին, որն առանց այդ էլ համավարակի հետեւանքների տակից դուրս գալու համար իրեն պատեպատ է խփում, որովհետեւ գիտե՝ իր վերջին միակ դարման անողն ինքն է՝ ո՛չ դիմությունն է իր ձեռքը բռնելու, ո՛չ ընդդիմությունը:

Այս օրերին ատամնաբույժներն ասում են՝ մարդկանց ատամները սկսել են հազվադեպ ցավել, կույրաղիքի, ստամոքսի, սովորական, ամենօրյա հիվանդությունները նահանջել են: Սրանից պետք չէ ուրախանալ, որովհետեւ ոչ թե ազգիս առողջ բջիջներն են շատացել, այլ ինքնապաշտպանական բնազդն է սրվել: Դա եւս սթրեսների հետեւանք է: Մարդիկ բողոքում են անքնությունից, հաճախակի դարձած սրտխփոցներից, քնում են լուսադեմին, մի կերպ արթնանում կեսօրն անց: Սա եւս օրգանիզմի ինքնապաշտպանական ռեակցիայի մասին է վկայում:

Արցախցիները պատմում են, որ 1990-ականների պատերազմի տարիներին մատների վրա կարելի էր հաշվել, թե կույրաղիքի, ստամոքսի, սրտի հետ կապված խնդիրների քանի դեպք է գրանցվել քաղաքացիական բժշկության ոլորտում: Մարդիկ անգամ գրիպով կամ անգինայով չեն հիվանդացել: Բայց ի՞նչ է կատարվել հրադադարից հետո... սրտանոթային, չարորակ ուռուցքային, շաքառադիաբետային հիվանդությունները կայծակնային արագությամբ գլուխ են բարձրացրել, ու այդ ամենը՝ պատերազմի սթրեսների հետեւանքով: Վախի, անհանգստության, լարվածության ապրումները կաթիլ-կաթիլ դուրս են գալու զանազան հիվանդությունների տեսքով: Այսօր կոչ եք անում՝ կրել դիմակ, փրկեք կյանքեր, վաղը դիմակ կրած ու կորոնավիրուսով չվարակված քաղաքացիներն այսօրվա սթրեսների պատճառով կորոնավիրուսից հազար անգամ վտանգավոր հիվանդություններ են ձեռք բերելու: Համաշխարհային վիճակագրությունն էլ է միլիոն անգամ դա ապացուցել: Չի կարելի մարդկանց օրեր ու ամիսներ շարունակ պահել լարվածության, տագնապների, ճնշումների մեջ՝ պատճառաբանելով, թե ամեն ինչ ժողովրդի համար եք անում: Քաղաքական ու իրավական արդարությունը շատ թանկ է նստելու այդ նույն ժողովրդի վրա, այն կյանքեր է արժենալու, բազմաթիվ անբուժելի, ծանր հիվանդություններով ընդհատված կյանքեր: Կորոնովիրուսի մարտական ճակատին զուգահեռ՝ քաղաքական ու դատաիրավական մյուս ճակատը բացած գործիչները երբեւէ մտածե՞լ են, որ այս ճգնաժամից հետո էլ կյանք կա ու մեր երեխաներին պետք են առողջ ծնողներ, իսկ ծնողներին պետք են առողջ երեխաներ: Իսկ այդ առողջությունը հենց հիմա վտանգված է, եւ վտանգը ոչ այնքան կորոնավիրուսից է գալիս, որքան կորոնավիրուսին սերտաճած քաղաքական ու դատաիրավական անառողջ, ճնշող, ժողովրդին արնաքամ անող իրավիճակից:

Գեւորգ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

*Հունիսի 17-ին լրացավ Մեծն Պարույր Սեւակի մահվան հերթական տարելիցը, որի առթիվ էլ ներկայացնում ենք մեր աշխատակցի զրույցը նրա թոռան՝ գրականագետ* ***Սեւակ Ղազարյանի*** *հետ, որոշ հատումներով:*

**- Արդեն երկար տարիներ Դուք զբաղվում եք Ձեր պապի՝ Պարույր Սեւակի գրական ժառանգությամբ, հրատարակել եք մի շարք անտիպ ստեղծագործություններ, այդ թվում՝ մեկ անավարտ վեպ: Այդ ամենը նախասիրությո՞ւն է, թե որդիական պարտք՝ պապի հանդեպ:**

-Ամենից առաջ՝ կենսաձեւ ու մասնագիտություն: 8-րդ դասարանն էի ավարտում, երբ վերջնականապես որոշեցի, որ կյանքս կապելու եմ գրականության հետ: Եվ ոչ թե այն պատճառով, որ Պարույր Սեւակի թոռն եմ, այլ որովհետեւ մեկընդմիշտ սիրահարվեցի գրականությանը: Ընդ որում՝ թե՛ այն ժամանակ, թե՛ հիմա շատ ավելի նախընտրում եմ արձակը, քան պոեզիան: Իմ կյանքն առանց գրականության ես չեմ պատկերացնում, եւ բանասիրական-խմբագրական-հրատարակչական-գրականագիտական աշխատանքով զբաղվելը մեծագույն հաճույք է ինձ համար: Սակայն, իհարկե Պ. Սեւակի ուղղակի եւ անուղղակի ազդեցությունը նույնպես կա: Թեկուզ այն իրողությունը, որ ես մեծացել եմ նրա որդու տանը, ուր մոտ երկու հազար կտոր գիրք կա (բնականաբար, այդ թվում նաեւ՝ Սեւակին առնչվող մեծաքանակ գրականություն) չէր կարող որեւէ կերպ չազդել ինձ վրա: Իսկ արդեն ուսանողական տարիներից Սեւակով սկսեցի զբաղվել մասնագիտորեն, ինչը շարունակում եմ անել մինչ օրս: Եվ սա արդեն թե՛ մասնագիտություն է, թե՛ նախասիրություն, թե՛ որդիական պարտքի հատուցում:

**- Անտիպները շա՞տ են: Կա՞ն այնպիսիներ, որոնք այս կամ այն դիպվածով հայտնվել են ուրիշների մոտ եւ այս պահին հասանելի չեն նրա ժառանգներին:**

-Շատ կամ քիչ ասելը խիստ հարաբերական է: Եթե հաշվի առնենք, որ անտիպ են մնացել մի շարք հոդվածներ, գիտական աշխատություններ, Սեւակի նամականու մեծ մասը եւ իհարկե գեղարվեստական գործերի որոշակի քանակ՝ անավարտ եւ սեւագիր գործեր, ապա կարելի է ասել, որ շատ են: Դրանց մի մասը, ինչպես գիտեք, արդեն տպագրվել է: Ուրիշների մոտ ձեռագրեր կան, այդ թվում՝ անտիպ գործեր, որոնց մի մասը հրատարակվել է (օրինակ՝ «Մուտք» ժողովածուն): Անտիպ էլ դրանց պայմանականորեն պիտի կոչել, քանզի դրանց մեծ մասի օրինակները կան բանաստեղծի արխիվում, եւ այդ «անտիպները» ավելի շատ տարբերակի արժեք ունեն: Տեղին է շնորհակալությամբ նշել, որ իրական անտիպ գործեր (բանաստեղծություններ, նամակներ եւ այլն) ոմանք փոխանցել են Սեւակի ժառանգներին: Այդպես են վարվել, օրինակ, Գրիգոր Ջալիկյանը, գրականագետներ Երվանդ Տեր-Խաչատրյանը, Արմեն Սարգսյանը եւ ուրիշներ:

**- Մինչ օրս Սեւակը չունի երկերի լիակատար ժողովածու. աշխատո՞ւմ եք այդ ուղղությամբ:**

-Այո՛, դա իմ երազանքներից մեկն է: Բայց երկերի իսկապես լիակատար ժողովածու հրատարակելը հսկայածավալ, տարիներ ձգվող աշխատանք է պահանջում: Ընդ որում՝ այդպիսի աշխատանքը հնարավոր է իրականացնել միայն հմուտ գիտնականների խումբ ստեղծելով, ինչը մեր օրերում շատ բարդ է, հատկապես՝ ֆինանսական առումով: Այսօր ես թե՛ որպես Պ. Սեւակի ժառանգ, թե՛ որպես նրա անունը կրող թանգարանի տնօրեն ավելի իրատեսական եմ համարում երկերի տասը կամ տասներկու հատորյակի հրատարակումը: Եվ այդ ուղղությամբ համապատասխան աշխատանքներ արդեն տարվում են:

**- Տարիներ առաջ Հովիկ Չարխչյանը տպագրեց «Սուլամիթա. Սեւակի մեծ սերը» երկհատորյակը, որը, ըստ շրջանառվող լուրերի, դուր չի եկել գրողի ժառանգներին, այդ թվում՝ ձեզ: Իրականում ո՞րն էր պատճառը, նամակների իսկության վրա՞ էիք կասկածում, թե՞ չէիք ցանկանում, որ հրատարակվեն դրանք:**




-Այո՛, անձամբ ես բացասական վերաբերմունք ունեմ այդ գրքի հանդեպ: Պատճառները մի քանիսն են: Նախ՝ նամակները թեեւ իսկական են, բայց՝ հատվածական: Իսրայել մեկնելուց առաջ Սուլամիթան իր նախընտրած հատվածները պատճենահանել եւ ուղարկել է Հայաստան (Մատենադարան, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարան, «Սովետական գրող» հրատարակչություն, Պ. Սեւակի տուն-թանգարան եւ այլն): Շատերը ծանոթ են եղել այդ նամակ հատվածներին, բայց ոչ ոք իրեն թույլ չի տվել հրատարակել դրանք: Դա արել է միայն Հ. Չարխչյանը՝ նախկին Արարատի շրջկոմի բաժնի վարիչ իր մոր միջոցով Պ. Սեւակի տուն-թանգարանից ձեռքը գցելով այդ նամակները:

Երկրորդ՝ գրեթե համոզված եմ, որ Պ. Սեւակն ինքը երբեք չէր ցանկանա, որ իր անձնական, առավել եւս՝ սիրային նամակները դառնան հանրային սեփականություն: Սեւակի խառնվածքը քիչ թե շատ ճանաչողները կհասկանան, թե ինչու եմ այդպես կարծում: Ընդհանրապես արվեստագետներն այս առումով բաժանվում են երկու խմբի. ոմանք առավել կամ նվազ պատրաստակամությամբ հանրայնացնում են իրենց անձնական կյանքը (Չարենց, Մայակովսկի, Դալի, Բուքովսկի...), մյուսները փորձում են հնարավորինս խուսափել դրանից (Տոլստոյ, Էկզյուպերի, Սահյան, Սեւակ...):

Երրորդ՝ Սուլամիթան Սեւակի «մեծ սերը» չէ, դա միֆ է (փակագծերում ասեմ, որ իմ խորին համոզմամբ սերը «մեծ» կամ «փոքր» չի լինում): Սեւակի եւ Սուլամիթայի միջեւ շատ բուռն կապ է եղել մոտ երեք տարի (1957-1960 թթ): Սակայն թե՛ դրանից առաջ, թե՛ հետո Սեւակի կյանքում բազմաթիվ այլ սերեր են եղել, որոնց ընդամենը մի մասի անուններն են հայտնի ավելի նեղ՝ գրական կամ մերձգրական շրջանակներում: Ես հասկանում եմ, որ կգա մի օր, երբ կտպագրվեն նրա բոլոր սիրային նամակները եւ հանրությունը կճանաչի Սեւակի սերերից շատերին: Սակայն կարծում եմ, թե որքան ուշ գա այդ օրը, այնքան լավ: Եվ այստեղ խնդիրը ոչ այնքան Սեւակի եւ նրա ժառանգների շուրջ է պտտվում, որքան Սեւակի սերերի եւ նրանց ժառանգների: Արդյո՞ք այդ մարդիկ (եւ մեր հանրությունն ընդհանրապես) պատրաստ են նման «բացահայտումների» (օրինակ այն, որ Սեւակը կապ է ունեցել ինչ-որ մեկի մոր կամ տատիկի հետ, որն այդ պահին ամուսնացած է եղել), արդյո՞ք նման «բացահայտումներ» անելով՝ մենք չենք վիրավորում նրանց: Եվ վերջապես, եթե նման «բացահայտումներ» ենք անում, ապա պիտի ամբողջ ճշմարտությունն ասենք՝ ոչինչ չթաքցնելով: Իսկ ձեր նշած գրքում (չգիտեմ՝ օբյեկտիվ թե սուբյեկտիվ պատճառներով) ամբողջ ճշմարտությունը չի ասվում. Սեւակի ու Սուլամիթայի հարաբերությունները միշտ չէ, որ այդքան ռոմանտիկական եւ իդիլիական բնույթ են կրել: Ավելի մանրամասնել չեմ կարող, քանզի ինչպես ասացի՝ վստահ եմ, որ Սեւակն ինքը դեմ կլիներ դրան:

Չորրորդ պատճառն ամենակարեւորն է ինձ համար: Կարդալով այդ գիրքը՝ տպավորություն է ստեղծվում, որ եթե Սեւակի կյանքում չհայտնվեր Սուլամիթան, ապա Սեւակը որպես խոշոր բանաստեղծ չէր կայանա: Ինչո՞ւ է այդպիսի տպավորություն ստեղծվում: Որովհետեւ գրքի հեղինակը 1957 թվականից ի վեր գրված սեւակյան գրեթե բոլոր ընտիր գործերը կապում է Սուլամիթայի անձի հետ: Ստացվում է՝ չլիներ Սուլամիթան, չէր լինի Պարույր Սեւակ հանճարը: Իսկ սրան ես կտրականապես դեմ եմ, որովհետեւ դա բացարձակապես չի համապատասխանում ճշմարտությանը: Ավելին՝ գրքում երբեմն նշվում են ստեղծագործություններ, որոնք իբրեւ թե Սուլամիթայի անմիջական ազդեցությունն են կրում, մինչդեռ իրականում դրանք վերաբերում են այլ կանանց: Եվ ընդհանրապես հանճարները ոգեշնչման տարբեր աղբյուրներ կարող են ունենալ, ըստ որում՝ ոչ միայն սիրո հողի վրա, ու չի կարելի այդ ամենը սահմանափակել ընդամենը մեկ անձով կամ երեւույթով:

**- Պարույր Սեւակի մահվան վարկածները շատ են, դրանցից ո՞րն է ձեզ ավելի արժանահավատ թվում եւ ո՞րն է ձեր բուն վարկածը:**

- Այո՛, իրավացի եք՝ տարբեր վարկածներ են շրջանառվում եւ ըստ երեւույթին դեռ երկար կշրջանառվեն: Սակայն թե՛ հայրս, թե՛ ես, թե՛ շատ այլ՝ իսկապես քաջատեղյակ մարդիկ համոզված ենք, որ դա դժբախտ պատահար էր: Նորից պետք է մի շարք պատճառներ նշեմ:

Առաջին եւ ամենակարեւոր պատճառն այն է, որ Սեւակն այդ ժամանակ դեռ նոր-նոր էր մեքենա վարել սովորում: Այդ գործում նրան օգնում էին ընկերները, համագյուղացիները, ծանոթները: Եվ մինչ այդ ողբերգական օրը Սեւակը երբեք ինքնուրույն նման երկարատեւ ճանապարհորդություն չէր նախաձեռնել: Բավական է մեջբերեմ մի հուշ, որը հայրս է պատմել, եւ ամեն ինչ պարզ կդառնա: Հայրս այդ ժամանակ համարյա 13 տարեկան է եւ հիշում է, որ երբ այդ օրը բանաստեղծն իրենց առանձնատան ավտոտնակից մեքենան ետ քշելով դուրս է բերել ու չի վնասել այն, շատ է ուրախացել: Ինչո՞ւ: Որովհետեւ անվարժ վարորդ լինելով՝ մեքենայով ետընթաց կատարելը դեռ շատ բարդ գործ է եղել նրա համար: Հանգամանքների բերումով Սեւակի վարորդն այդ օրը չի կարողացել գալ եւ ընտանիքը տեղափոխել Երեւան, ու Սեւակը ճակատագրական որոշում է կայացրել՝ ինքնուրույն վարել մեքենան: Այդ մասին նախօրոք ոչ ոք չի իմացել եւ չէր էլ կարող իմանալ:

Երկրորդ՝ Խորհրդային Հայաստանի ղեկավարների կողմից սպանության կազմակերպումը անհավանական է նաեւ այն պատճառով, որ շատերի հետ բանաստեղծը մտերիմ հարաբերություններ ուներ: Ինչ վերաբերում է «Եղիցի լույս» գրքի բանտարկությանը, ապա պետք է նշեմ, որ այստեղ կենտրոնական դեր են խաղացել ոչ այնքան ժամանակի քաղաքական-իշխանական վերնախավը, որքան գրչակից «ընկերները»՝ գրական եւ հրատարակչական ոլորտի «յուրայինները»: Իսկ դրա հիմքում էլ հաճախ եղել է անձնական թշնամանքը կամ նախանձը:

Երրորդ՝ մինչեւ օրս չի հայտնաբերվել գեթ մեկ ծանրակշիռ փաստ, որ խոսի հօգուտ «դավադրության» կամ «սպանության» վարկածի: Փոխարենը կան բազմաթիվ փաստեր, որ ուղղակիորեն կամ անուղղակիորեն վկայում են դժբախտ պատահարի մասին:

Սակայն այստեղ պետք է նշեմ մեկ այլ շատ կարեւոր հանգամանք: «Եղիցի լույս» գրքի բանտարկությունն էապես ազդել էր Պ. Սեւակի ֆիզիկական եւ հոգեկան առողջության վրա, քանզի արվեստագետի համար չկա ավելի մեծ ցավ, քան սեփական ստեղծագործության արգելված լինելը: Կյանքի վերջին երկու տարիներին Պ. Սեւակը դարձել էր շատ դյուրագրգիռ ու նյարդային: Անգամ լուսանկարներից երեւում է դա. 46-47 ամյա բանաստեղծն առնվազն տասը տարով ավելի է մեծ թվում, եւ դժվար չէ կռահել, թե որքան ծանր ու տառապալից էին նրա ապրումներն այդ շրջանում: Սեւակը, բոլոր հնարավոր միջոցներն օգտագործելով, պայքարում էր գրքի լույս ընծայման համար, գնում էր որոշ զիջումների, կրճատումների, սակայն ոչինչ չէր ստացվում, ամեն անգամ մի նոր պատի էր բախվում: Եվ այս իմաստով 1971 թվականի հունիսի 17-ի վթարը ինչ-որ տեղ հետեւանք էր այդ շրջանի իր հոգեվիճակի: Այս առումով անշուշտ կարելի է մեղադրել ժամանակի իշխանություններին նաեւ, բայց ոչ ուղղակի սպանության համար:

**- Ասում են՝ գրողի արխիվով ժառանգները չպետք է զբաղվեն, որովհետեւ արյունը թույլ չի տալիս դրական կողմերի կողքին դնել նաեւ բացասականը: Երբեւէ բախվե՞լ եք այդպիսի երկընտրանքի:**

-Չգիտեմ, թե ով է այդպես ասում, բայց հաշվի առնելով այն աշխատանքը, որ արել եւ անում են, օրինակ, Չարենցի կամ Մաթեւոսյանի ժառանգները, Հեմինգուեյի կամ Պիկասոյի ժառանգները, կարծում եմ՝ այդպես ասողները սխալվում են: Իհարկե, բացառություններ միշտ լինում են: Եվ իհարկե, ես, ինչպես յուրաքանչյուր մարդ, կարող եմ իմ սուբյեկտիվ մոտեցումն ունենալ այս կամ այն հարցի վերաբերյալ: Ընդհանրապես՝ որեւէ աշխատանքում անհնար է կատարյալ օբյեկտիվություն պահպանել: Բայց Պ. Սեւակի արխիվի հետ աշխատելիս ես առաջնորդվում եմ մասնագիտական պատասխանատվությամբ: Այդ են վկայում իմ հրատարակած սեւակյան անտիպ վեպն ու գիտական աշխատությունները, որոնք անավարտ լինելով, հետեւաբար եւ հեղինակի կողմից վերջնական խմբագրման չենթարկվելով, ունեն նաեւ թույլ հատվածներ: Սակայն նշածս գործերը հրատարակվել են ամբողջությամբ՝ առանց որեւէ կամայական փոփոխությունների:

**- Առաջիկայում նոր նախաձեռնություններ կա՞ն՝ անտիպների հրատարակություններ, արդեն հայտնի գործերի վերահրատարակություններ եւ այլն:**

-Նախ ասեմ, որ անցյալ տարի՝ Պ. Սեւակի 95 ամյակի առթիվ չորս գիրք տպագրվեց: Վերահրատարակվեցին «Անանեջ» վեպն ու «Անլռելի զանգակատուն» պոեմը: Լույս տեսան երկու նոր գրքեր: Մեկը կոչվում է «Սիրերգություն», որտեղ իմ ընտրությամբ ամփոփված են բանաստեղծի 133 սիրային բանաստեղծությունները՝ գրված կյանքի տարբեր տարիներին: Իսկ մյուս գիրքը ծնվեց Պ. Սեւակի եւ Հ. Թումանյանի թանգարանների համագործակցության արդյունքում: Միեւնույն գրքում տեղ գտան մեր երկու մեծերի մանկական ստեղծագործությունները: Հրատարակությունն էլ յուրօրինակ է, մի կողմից գիրքը բացվում է Թումանյանի գործերով, հակառակ կողմից՝ Սեւակի: Նշածս բոլոր գրքերի տպաքանակները (500 կամ 1000 օրինակ) մի քանի ամսում գրեթե սպառվեցին, եւ շուտով վերահրատարության կարիք կառաջանա:

Ինչ վերաբերում է նոր հրատարակություններին, ապա ասեմ, որ արդեն մոտ երկու տարի աշխատում եմ Պ. Սեւակի «Մարդը ափի մեջ» գրքի վրա: Երբ ծնվեց այս ժողովածուն վերահրատարակելու գաղափարը, բնականաբար սկսեցի համապատասխան նյութեր ուսումնասիրել սեւակյան արխիվից: Եվ պարզվեց, որ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով ժողովածուն զգալիորեն մկրատվել է. մի շարք բանաստեղծություններ կամ առանձին բանաստեղծական տողեր-հատվածներ դուրս են մնացել: Այժմ այդ ամենը վերականգնվել է, եւ շուտով ընթերցողի սեղանին կդրվի «Մարդը ափի մեջ» գրքի շատ ավելի ամբողջական տարբերակը՝ մոտ երկու տասնյակի հասնող անտիպ բանաստեղծություններով:

Պրոֆ. ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# Հայերը պետութենաստեղծ ազգ

***Նախանցյալ շաբաթ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտնած միտքը, թե հայ ժողովրդի համար պետականության գաղափարը խորթ է, եւ հայերս ազգովին չենք սիրում այն, մեղմ ասած՝ զարմացրել էր մեր շատ պատմաբանների: Մեր թերթում առաջինը դրան արձագանքեց պրոֆ. Ս. Սարգսյանը՝ «Մենք պետականության գաղափարը հավերժ կրող ազգ ենք» հոդվածով: Այսօր նույն խնդրին անդրադառնում է պատմաբան-արեւելագետ, ակադեմիկոս Ն. Հովհաննիսյանը ընդարձակ հոդվածով, ներկայացնելով Վանի թագավորությանը հաջորդած հայկական եւս 5 թագավորական հարստությունների (դինաստիա) պետականաստեղծ ու պետականաշեն գործունեության շատ հակիրճ պատմությունը, չմոռանալով նշել նաեւ, անշուշտ, բազմաթիվ այլ պետություններում հայկական պետականաստեղծման դրվագներ:***

Խմբ.

Աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը՝ հայ ժողովուրդը, ունի իրեն բնորոշ մի շարք բարձրարժեք որակներ եւ յուրահատկություններ: Մենք համաշխարհային պատմության խորքային ուսումնասիրության հիման վրա հանգել ենք այն եզրակացության, որ հայերը պետութենաստեղծ ազգ են: Դարերի ընթացքում միանգամ չէ, որ հայությունը հիմնել է իր պետականությունը, կորցրել, նորից վերականգնել եւ նորից կորցրել: Բայց անկախ պետականություն ունենալու հայերի ձգտումը մնացել է անկոտրում: Այդպես է եղել հնագույն շրջանում, այդպես է եղել միջին դարերում,այդպես է եղել նոր եւ նորագույն շրջանում, այդպես է մեր օրերում: Դա դրսեւորվել է երկու կերպ:

**Առաջին, ազգային պետականության հաստատում իր բնօրրանում՝ բուն Հայաստանում:**

**Երկրորդ, օտար երկրների եւ ժողովուրդների պետականության ստեղծում, պահպանում եւ օժանդակում: Դա համաշխարհային պատմության մեջ բացառիկ երեւույթներից մեկն է:**

Առաջին կամ բուն Հայաստանի առումով, պետութենաստեղծումն իրականացվել է մեկը մյուսին հաջորդած Վանի (մ.թ.ա. 858-մ.թ.ա.585 ), Երվանդունիների (մ.թ.ա. 570-մ.թ.ա.195), Արտաշեսյանների ( (մ.թ.ա.189-մ.թ.1 ), Արշակունիների ( 54-428 թթ.) եւ Բագրատունիների ( 885-1045թթ ) հայկական թագավորական դինաստիաներով, Կիլիկյան Հայաստանով ( 1080-1375թթ.):Պետության գաղափարը անմար նստած է հայության գեներում եւ նա ուր գնում է, որ երկրում հաստատվում է, պետության գաղափարն իր հետ է տանում:

Հաստատվելով օտար երկրներում, հայկական հավաքականությունը որպես կանոն ակտիվ դերակատարում է ունեցել եւ շարունակում է ունենալ, օտար ժողովուրդների պետական կառավարման համակարգում, այդ պետությունների ամրապնդման ու կայացման գործում, որը հաստատվում է բազմաթիվ օրինակներով:

428թ., Արշակունիների անկումից հետո, թեեւ Հայաստանը կորցրեց ինքնուրույն գործոն լինելու իր կարգավիճակը, սակայն անգամ այդ պայմաններում, V-VII դարերում, մարզպանության շրջանում, Հայաստանը հլու հնազանդ ենթակա չէր, այլ կարողանում էր յուրահատուկ ձեւով դրսեւորել իր կամքը եւ պահպանել իր ազգային կերպարը, որի հետ հարկադրված էր հաշվի նստել Սասանյան Պարսկաստանը: Ընդորում, հայ նախարարները պահպանում էին իրենց ժառանգական իրավունքները, տիրույթները, համապատասխան տեղը կառավարման համակարգում: Ուշագրավ է նաեւ այն հանգամանքը, որ հայկական ռազմական ուժերը չլուծարվեցին կամ չտարրալուծվեցին պարսկական ռազմական ուժերի մեջ: Նրանք պահպանեցին նաեւ այլ արտոնություններ: Այս բոլորը հիմք է ծառայել այն տեսակետի համար, որ Արշակունիների անկումից հետո էլ յուրահատուկ կերպով պահպանվել է թագավորական, այսինքն պետական իշխանությունը, որն անցել էր հայ նախարարներին:

Այդ շրջանում, 640-ական թվականներին, քաղաքական քարտեզի վրա հայտնվում է մի նոր պետություն՝ Արաբական խալիֆայությունը, որը պարտության է մատնում Սասանյան Պարսկաստանին, նվաճում այն եւ այլ տարածքներ: Տեղի են ունենում նաեւ բախումներ խալիֆայության եւ Հայաստանի միջեւ: Հայաստանի իշխան Թեոդորոս Ռշտունին, որը շատ հեռատես, ճկուն եւ խելացի պետական այր էր, մտահոգ Հայաստանի ապագայով եւ անվտանգության խնդիրներով, որդեգրում է նոր ռազմավարություն, որի արդյունքում 652թ. ստորագրվում է հայ-արաբական պայմանագիր, որը հայ պատմիչ Սեբեոսը բնութագրում է որպես «Հաշտության պայմանագիր»: Թեոդորոս Ռշտունին Արաբական խալիֆայի կողմից վերստին հաստատվեց ոչ միայն Հայ-



*Վանի թագավորության գլխավոր զինանշանը՝ առյուծը*

յոց իշխանի իր պաշտոնում, այլեւ նշանակվեց նաեւ Վիրքի եւ Աղվանքի իշխան: Այսպիսով, Թեոդորոս Ռշտունու իշխանության ներքո հայտնվեցին Հայաստանը, Վրաստանը, Աղվանքը եւ ողջ Կովկասը մինչեւ Ճորա պահակ: Հետագայում իրադրությունը փոխվում է եւ արաբները ներխուժում են Երուսաղեմ, Հայաստան, Քարթլի եւ կովկասյան այլ շրջաններ: Երուսաղեմի Հայ եկեղեցու առաջնորդը, կանխատեսելով արաբների մոտալուտ ներխուժումը Երուսաղեմ, ճանապարհորդում է Մեքքա, հանդիպում իսլամի հիմնադիր Մուհամմադ մարգարեին եւ նրանից ստանում հրովարտակ, որն երաշխավորում էր Երուսաղեմում բնակվող հայերի կյանքի եւ գույքի ապահովությունը: Միաժամանակ մարգարեն ճանաչում է Հայ եկեղեցու իրավունքները Երուսաղեմի բոլոր այն սրբատեղերի վրա, որոնք գտնվում էին նրա վերահսկողության տակ: Երբ խալիֆա Օմարը 638թ, գրավում է Երուսաղեմը, ապա նա իր նոր հրովարտակով հաստատում է բոլոր այն երաշխիքները, որ Մուհամմադ մարգարեն տվել էր Երուսաղեմի Հայոց պատրիարքությանը: Հետագայում Սալահ ադ-Դինը նույնպես ճանաչում է Երուսաղեմի Հայ եկեղեցու բոլոր այն իրավունքները, որը նրան տվել էին իր նախորդները:

VII դարի կեսերին վերսկսվում են արաբական նվաճումները, որոնք ծավալվում են երեք ուղղություններով՝ արեւմտյան, արեւելյան եւ հյուսիսային : Արաբական խալիֆայությունը ձգտելով ծավալվել դեպի հյուսիս, նպատակ ուներ նվաճել Կովկասը: 701թ. տեղի ունեցավ Հայաստանի նվաճումը: Նույն այդ թվականին Արաբական խալիֆայությունը նվաճեց նաեւ Վրաստանը, Աղվանքը եւ մերձկասպյան տարածքները : Հարավային Կովկասն ամբողջությամբ անցավ խալիֆայության տիրապետության տակ: Եվ դրանից հետո տեղի ունեցավ մի կարեւոր իրադարձություն: Արաբական խալիֆայությունը վերոնշյալ նվաճված տարածքներից 701թ. ստեղծեց նոր վարչական տարածք կամ միավոր, որը կոչվեց Արմինիա՝ Հայաստան: Նրա մեջ մտնում էին Հայաստանը, Վրաստանը (Ջուրզան),Աղվանքը ( Առանը), մերձկասպյան շրջանները, որոնց հիման վրա հետագայում ձեւավորվեց Շիրվանը եւ Դերբենդը (Բաբ ալ-Աբվաբ): Արմինիա վարչատարածքային միավորի կառավարիչը կոչվում էր ոստիկան, որի նստավայրը Հայոց հին մայրաքաղաք՝ Դվինն էր: Սա նույնպես բացառիկ իրողություն է: Արմինիան ըստ էության մի պետություն էր պետության մեջ, տվյալ պարագայում՝ Արաբական խալիֆայության մեջ: Դա ուղղակի շշմեցուցիչ փաստ է:

Հետագա տարիներին սրվում են հարաբերությունները Արաբական խալիֆայության եւ Հայաստաանի միջեւ, որի արդյունքում, ի վերջո, 885թ. Հայաստանին հաջողվեց նվաճել իր անկախությունը: Արաբական խալիֆա Մութամիդը ստիպված հաշտվում է կատարված իրողության հետ եւ Աշոտ Բագրատունուն ճանաչել Հայաստանի թագավոր, նրան թագ ուղարկել, ինչպես նաեւ արքային վայել



*Արտածիսյանների թագավորության խորհրդանշանը՝ Արծիվը, մագիլների տակ՝ թշնամիները*

նվերներ՝ թագավորական զգեստներ, պարգեւներ, ընծաներ, հրեղեն երիվարներ, զենքեր ու զարդեր: Նա օծվում է « Հայոց թագավոր Աշոտ I» անվամբ, իսկ Բագրատունիները հաստատվում են որպես կառավարող թագավորական դինաստիա:

Այսպիսով, Արշակունիների անկումից 457 տարի եւ արաբական նվաճումից մոտ 200 տարի անց, Հայաստանը վերականգնեց իր անկախ պետականությունը: Նա դարձավ իրենից որոշակի ուժ ներկայացնող երկիր, ներազդում էր աշխարհաքաղաքական մթնոլորտի ձեւավորման եւ քաղաքական ուժերի հավասարակշռության հաստատման գործընթացի վրա: Ասվածն ավելի է հաստատվում, եթե նկատի ունենանք, որ արաբական խալիֆան եւ բյուզանդական կայսրը մշտապես մրցակցում էին Հայաստանն իրենց կողմը գրավելու եւ դրանով տարածաշրջանում իրենց դիրքերն ամրապնդելու եւ ազդեցությունն ուժեղացնելու համար:Այդ պարագան բարձրացնում էր Հայաստանի կարեւորությունը հաչս կայսեր եւ խալիֆայի:

Բյուզանդիային հաջողվեց տապալել Բագրատունիների դինաստիան եւ իրեն ենթարկել Հայաստանը: Ահա, այսպես, Հայաստանը կրկին կորցրեց իր անկախությունը եւ մոտ հինգ դար հայտնվեց օտար նվաճողների իշխանության ներքո, որոնք մորեխի նման հայտնվում էին տարածաշրջանում:

Սակայն պետք է նշել, որ տարբեր երկրներում, մասնավորապես արաբական երկրներում, Բյուզանդիայում, Կիլիկիայում, Ռուսաստանում կենտրոնացված էին ազդեցիկ հայկական համայնքներ, որոնք կարեւոր քաղաքական, ռազմական, տնտեսական եւ մշակութային դիրքեր ունեին եւ ներգրավված էին հյուրընկալ երկրների հասարակական եւ քաղաքական, անգամ կառավարման համակարգում: Ահա հենց այս հայկական համայնքներն էին, որ ամենաակտիվ կերպով ներգրավվել էին հյուրընկալ երկրների եւ ժողովուրդների պետականաստեղծ գործունեության մեջ, նրանց կայացմանը եւ զարգացմանը: Կանգ առնենք դրանցից մի քանիսի լուսաբանության վրա:

1. Բյուզանդական կայսրություն: Հայկական դինաստիա: Հայտնի է, որ Հռոմեական կայսրությունը 395թ. բաժանվեց երկու մասի՝ արեւմտյան, որը շարունակվեց կոչվել Հռոմեական կայսրություն, եւ արեւելյան, որը կոչվեց Բյուզանդական կայսրություն: Դրանք առանձին, միմյանցից անկախ կայսրություններ էին: Բյուզանդական կայսրությունում մեծաքանակ էին հայերը, այդ թվում պաշտոնյաները, զինվորական գործիչները, հոգեւորական այրերը, որոնք մեծ ազդեցություն եւ դիրք ունեին: Նրանք այնքան ուժեղ էին, որ 867 թ. գրավեցին իշխանությունը, Բյուզանդիայի կայսրությունում հաստատվեց Հայկական դինաստիան: Հայկական դինաստիայի հիմնադիրը հայազգի Բարսեղ Առաջինն էր: Հայ կայսրերը Բյուզանդիան կառավարել են համարյա երկու դար, մոտ 190 տարի՝ 867-1057 թթ:

**2. Ռուսիայի ուղղափառության ընդունումը եւ հայազգի Աննա իշխանուհու դերը : Սկզբնական շրջանում Բյուզանդական կայսրությունը կառավարում էին համակայսր երկու հայ եղբայրները՝** Բարսեղ Երկրորդ Բուլղարասպանը եւ Կոնստանտինը: Հայերի դեկավար դերակատարումը չի սահմանա-



*Բագրատունյաց հարստության զինանշանը*

փակվել միայն Բյուզանդիայով: Հայկական դինաստիան բախտորոշ դերակատարում է ունեցել նաեւ Ռուսիայի ճակատագրում՝ կապված 988թ. Ռուսիայի քրիստոնեություն ընդունելու հետ: Նրանց քրոջ՝ Աննայի հետ ամուսնանալու ցանկություն է հայտնում Ռուսիայի իշխան Վլադիմիր Սվյատոսլավովիչը: Ամուսնանալու համար Աննան պայման է դնում, որ Վլադիմիրը պետք է ընդունի քրիստոնություն: Վերջինս համաձայնվում է եւ «Վերադառնալով մայրաքաղաք (Կիեւ-Ն.Հ.) Վլադիմիրը հրամայում է ոչնչացնել կուռքերը, իսկ ժողովուրդը մկրտվեց Դնեպրում»: Ռուսիան ընդունում է ուղղափառ քրիստոնեություն: Ուղղափառությունը՝ Պրավոսլավիեն, ինչպես հայտնի է, ռուսական պետության հիմքերի հիմքն է: Մյուս կողմից, եթե մի պահ ենթադրենք, որ Ռուսիան ընդուներ իսլամ, ապա դժվար է պատկերացնել, թե ինչպես կընթանար համաշխարհային պատմությունը: Հայոց իշխանուհի Աննան, որը դարձավ Ռուսիայի իշխանի առաջին տիկին, բախտորոշ եւ դրական դերակատարում ունեցավ ոչ միայն Ռուսիայի, այլեւ համաշխարհային մասշտաբով:

*Վերջը՝ հաջորդիվ*

**ԿԴՎ ԱՐՄՆ ՍՊԸ**
**Պետական ռեգիստրում գրանցման համարը՝ 269.110.961350**
**ՀՎՀՀ 02269566**
**ՀՀ ք. Երևան Րաֆֆու 111**

*Հաստատված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 12.12.2001թ. թիվ 465 հրամանով տարեկան (ամբողջական փաթեթով միջանկյալ) հաշվետվության ներկայացման համար Տարածվում է ՀՀ կառավարության 26.11.1998թ. N 740 որոշմամբ սահմանված կազմակերպությունների վրա*

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ
առ "31" դեկտեմբերի 2018թ.

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակա-շրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| **I. Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 10,414.3 | 149,904.9 |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 020 | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | 520.0 | 325.0 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ | 040 | | |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 050 | | |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 060 | | |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 070 | | |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 10,934.3 | 150,229.9 |
| **II. Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Նյութեր | 090 | 2,638.8 | 4,585.8 |
| Աճեցվող և բտվող կենդանիներ | 100 | | |
| Արագամաշ առարկաներ | 110 | | |
| Անավարտ արտադրություն | 120 | | |
| Արտադրանք | 130 | | |
| Ապրանքներ | 140 | 142,402.0 | 217,398.9 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | 6,947.2 | 12,392.5 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 160 | 67,963.4 | 152,406.1 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | | |
| Այլ դեբիտորական պարտքեր | 180 | | |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | 190 | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 200 | 55,124.5 | 80,615.3 |
| Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում? | 210 | | |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 275,075.9 | 467,398.6 |
| Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ | 230 | 286,010.2 | 617,628.5 |

| ՊԱՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակա-շրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | | |
| **III. Սեփական կապիտալ** | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 100.0 | 100.0 |
| Էմիսիոն եկամուտ | 250 | | |
| Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ | 260 | | |
| Կուտակված շահույթ | 270 | | |
| Պահուստային կապիտալ | 280 | | |
| Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝ | 290 | 35,070.8 | 443,935.5 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 35,170.8 | 444,035.5 |
| **IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 310 | | |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 320 | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 330 | | |
| Ոչ ընթացիկ պահուստներ | 340 | | |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝ | 350 | | |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | 0.0 | 0.0 |
| **V. Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Կարճաժամկետ բանկային վարկեր | 370 | | |
| Կարճաժամկետ փոխառություններ | 380 | 10.0 | |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | 154,927.0 | 25,463.3 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 400 | 311.9 | 425.2 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 81,920.1 | 128,188.0 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | 625.6 | 829.7 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 430 | 13,044.7 | 18,686.8 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին) | 440 | | |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 450 | | |
| Եկամուտներին վերաբերող շնորհներ | 460 | | |
| Ընթացիկ պահուստներ | 470 | | |
| Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝ | 480 | | |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 250,839.3 | 173,593.0 |
| **Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ** | **500** | **286,010.1** | **617,628.5** |

Ղեկավար Դ.Չեբոտնիկով

Գլխավոր հաշվապահ Լ.Գրիգորյան

31.01.19

**ԿԴՎ ԱՐՄՆ ՍՊԸ**
**Պետական ռեգիստրում գրանցման համարը՝ 269.110.961350**
**ՀՎՀՀ 02269566**
**ՀՀ ք. Երևան Րաֆֆու 111**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
01/01/2018- 31/12/2018

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանա-կաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանա-կաշրջան՝ աճողական) | Նախորդ տարվա միջանկյալ ժամանա-կաշրջան | Հաշվետու տարվա միջանկյալ ժամանա-կաշրջան |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 786,972.6 | 4,454,910.3 | 786,972.6 | 4,454,910.3 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | (550,281.0) | (3,270,981.2) | (550,281.0) | (3,270,981.2) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 236,691.6 | 1,183,929.1 | 236,691.6 | 1,183,929.1 |
| Իրացման ծախսեր | 040 | (56,972.7) | (502,250.9) | (56,972.7) | (502,250.9) |
| Վարչական ծախսեր | 050 | (112,424.9) | (103,248.9) | (112,424.9) | (103,248.9) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 67,294.1 | 578,429.4 | 67,294.1 | 578,429.4 |
| Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝ | 070 | 869.8 | 4,613.9 | 869.8 | 4,613.9 |
| | 071 | | | | |
| | 072 | | | | |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝ | 080 | (14,735.4) | (58,364.0) | (14,735.4) | (58,364.0) |
| | 081 | | | | |
| | 082 | | | | |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 53,428.4 | 524,679.3 | 53,428.4 | 524,679.3 |
| Ֆինանսական ծախսեր | 100 | (861.3) | | (861.3) | |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս) | 110 | | | | |
| Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս) | 120 | | | | |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝ | 130 | (7,319.6) | (10,878.7) | (7,319.6) | (10,878.7) |
| | 131 | | | | |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 45,247.6 | 513,800.5 | 45,247.6 | 513,800.5 |
| Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս) | 150 | | | | |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 45,247.6 | 513,800.5 | 45,247.6 | 513,800.5 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | (10,176.8) | (104,935.9) | (10,176.8) | (104,935.9) |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | 35,070.8 | 408,864.7 | 35,070.8 | 408,864.7 |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)* | 190 | | | | |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս)* | 200 | | | | |

* Սույն հոդվածների լրացումը պարտադիր է այն բաժնետիրական ընկերությունների կողմից, որոնց սովորական բաժնետոմսերը կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսերը հրապարակայնորեն վաճառվում են, կամ որոնք գտնվում են արժեթղթերի բաց (կանոնակարգվող) շուկայում սովորական բաժնետոմսեր կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսեր թողարկելու գործընթացում: Սույն հոդվածների գումարը ցույց է տրվում դրամներով (ոչ թե հազար դրամներով):

Ղեկավար Դ.Չեբոտնիկով

Գլխավոր հաշվապահ Լ.Գրիգորյան

31.01.19

**ԿԴՎ ԱՐՄՆ ՍՊԸ**
**Պետական ռեգիստրում գրանցման համարը՝ 269.110.961350**
**ՀՎՀՀ 02269566**
**ՀՀ ք. Երևան Րաֆֆու 111**

*Հաստատված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 12.12.2001թ. թիվ 465 հրամանով տարեկան (ամբողջական փաթեթով միջանկյալ) հաշվետվության ներկայացման համար Տարածվում է ՀՀ կառավարության 26.11.1998թ. N 740 որոշմամբ սահմանված կազմակերպությունների վրա*

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ
առ "31" դեկտեմբերի 2019թ.

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակա-շրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| **I. Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 149,904.9 | 116,995.2 |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 020 | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | 325.0 | 195.0 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ | 040 | | |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 050 | | |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 060 | | |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 070 | | |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 150,229.9 | 117,190.2 |
| **II. Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Նյութեր | 090 | 4,585.8 | 4,671.0 |
| Աճեցվող և բտվող կենդանիներ | 100 | | |
| Արագամաշ առարկաներ | 110 | | |
| Անավարտ արտադրություն | 120 | | |
| Արտադրանք | 130 | | |
| Ապրանքներ | 140 | 217,398.9 | 184,170.8 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | 10,052.6 | 352,907.1 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 160 | 152,087.6 | 180,275.7 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | | 83,948.7 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 180 | | |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | 190 | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 200 | 80,615.3 | 17,798.4 |
| Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 210 | | 0.0 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 464,740.2 | 823,771.7 |
| **Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ** | **230** | **614,970.1** | **940,961.9** |

| ՊԱՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակա-շրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | | |
| **III. Սեփական կապիտալ** | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 100.0 | 100.0 |
| Էմիսիոն եկամուտ | 250 | | |
| Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ | 260 | | |
| Կուտակված շահույթ | 270 | | |
| Պահուստային կապիտալ | 280 | | |
| Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝ | 290 | 443,935.5 | 786,678.2 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 444,035.5 | 786,778.2 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 310 | | |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 320 | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 330 | | |
| Ոչ ընթացիկ պահուստներ | 340 | | |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝ | 350 | | |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | 0.0 | 0.0 |
| **V. Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Կարճաժամկետ բանկային վարկեր | 370 | | |
| Կարճաժամկետ փոխառություններ | 380 | | |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | 23,148.0 | 1,814.1 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 400 | 82.2 | 726.5 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 128,188.0 | 130,977.6 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | 829.7 | 888.9 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 430 | 18,686.8 | 19,776.7 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին) | 440 | | |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 450 | | |
| Եկամուտներին վերաբերող շնորհներ | 460 | | |
| Ընթացիկ պահուստներ | 470 | | |
| Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝ | 480 | | |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 170,934.7 | 154,183.8 |
| **Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ** | **500** | **614,970.2** | **940,962.0** |

Ղեկավար Դ.Թոռչյան

Գլխավոր հաշվապահ Լ.Գրիգորյան

Director
Chief accountant
30.01.20

**ԿԴՎ ԱՐՄՆ ՍՊԸ**
**Պետական ռեգիստրում գրանցման համարը՝ 269.110.961350**
**ՀՎՀՀ 02269566**
**ՀՀ ք. Երևան Րաֆֆու 111**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
01/01/2019 - 31/12/2019

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանա-կաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանա-կաշրջան՝ աճողական) | Նախորդ տարվա միջանկյալ ժամանա-կաշրջան | Հաշվետու տարվա միջանկյալ ժամանա-կաշրջան |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ՝ | 010 | 4,454,910.3 | 5,218,751.6 | 4,454,910.3 | 5,218,751.6 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | (3,270,981.2) | (4,061,102.1) | (3,270,981.2) | (4,061,102.1) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 1,183,929.1 | 1,157,649.4 | 1,183,929.1 | 1,157,649.4 |
| Իրացման ծախսեր | 040 | (502,250.9) | (562,195.8) | (502,250.9) | (562,195.8) |
| Վարչական ծախսեր | 050 | (103,248.9) | (128,167.1) | (103,248.9) | (128,167.1) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 578,429.4 | 467,286.5 | 578,429.4 | 467,286.5 |
| Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝ | 070 | 4,613.9 | 23,096.9 | 4,613.9 | 23,096.9 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝ | 080 | (58,364.0) | (74,613.5) | (58,364.0) | (74,613.5) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 524,679.3 | 415,769.9 | 524,679.3 | 415,769.9 |
| Ֆինանսական ծախսեր | 100 | | | | |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս) | 110 | | | | |
| Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս) | 120 | | | | |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝ | 130 | (10,878.7) | 10,147.4 | (10,878.7) | 10,147.4 |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 513,800.5 | 425,917.3 | 513,800.5 | 425,917.3 |
| Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս) | 150 | | | | |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 513,800.5 | 425,917.3 | 513,800.5 | 425,917.3 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | (104,935.9) | (83,174.6) | (104,935.9) | (83,174.6) |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | 408,864.7 | 342,742.7 | 408,864.7 | 342,742.7 |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)* | 190 | | | | |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս)* | 200 | | | | |

* Սույն հոդվածների լրացումը պարտադիր է այն բաժնետիրական ընկերությունների կողմից, որոնց սովորական բաժնետոմսերը կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսերը հրապարակայնորեն վաճառվում են, կամ որոնք գտնվում են արժեթղթերի բաց (կանոնակարգվող) շուկայում սովորական բաժնետոմսեր կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսեր թողարկելու գործընթացում: Սույն հոդվածների գումարը ցույց է տրվում դրամներով (ոչ թե հազար դրամներով):

Ղեկավար Դ.Թոռչյան

Գլխավոր հաշվապահ Լ.Գրիգորյան

Director
Chief accountant
30.01.20

Առգե Բիզնես ՍՊԸ
ՀՎՀՀ 01839755
ք.Երևան,Շարուրի 47/1

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ առ 31 դեկտեմբերի 2019թ.

*հազ.ՀՀ դրամ*

| ԱԿՏԻՎ | 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| **1. Ոչ ընթացիկ ակտիվներ** | | |
| Հիմնական միջոցներ | 633,958 | 583,253 |
| Կենսաբանական ակտիվներ | | |
| Ներդրումային գույք | | |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 5,508 | 5,873 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ | | |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | | |
| Հետաձգված հարկային ակտիվներ | | |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | | |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | 639,466 | 589,127 |
| **2. Ընթացիկ ակտիվներ** | | |
| Պաշարներ | 1,646,106 | 1,660,043 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 2,542,766 | 2,146,170 |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 177,711 | 280,138 |
| Այլ ընթացիկ ակտիվներ | 345 | 3,444 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 4,366,928 | 4,089,795 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ | 5,006,394 | 4,678,922 |

| Սեփական կապիտալ և պարտավորություններ | 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| **3. Սեփական կապիտալ** | | |
| Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումար | 240,729 | 240,729 |
| Էմիսիոն եկամուտ | | |
| Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ | | |
| Կուտակված շահույթ | 2,624,954 | 1,661,893 |
| Պահուստային կապիտալ | | |
| Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում` | | |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | 2,865,683 | 1,902,622 |
| | | |
| **4.Պարտավորություններ** | | |
| **4.1. Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | | |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | | |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ | | |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ | 1,688,744 | 2,437,587 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | 1,688,744 | 2,437,587 |
| **4.2. Ընթացիկ պարտավորություններ** | | |
| Կարճաժամկետ բանկային վարկեր | | |
| Կարճաժամկետ փոխառություններ | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 451,967 | 338,714 |
| Շահութահարկի գծով պարտավորություն | | |
| Պահուստներ | | |
| Այլ ընթացիկ ֆինանսական պարտավորություն | | |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | 451,967 | 338,714 |
| | | |
| **Ընդամենը պարտավորություններ** | 2,140,711 | 2,776,301 |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | 5,006,394 | 4,678,922 |

Տնօրեն Տ. Մինասյան
Գլխ. հաշվապահ Կ.Ասլանյան

Առգե Բիզնես ՍՊԸ
ՀՎՀՀ 01839755
ք.Երևան,Շարուրի 47/1

## ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*հազ.ՀՀ դրամ*

| Ցուցանիշի անվանումը | 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Հասույթ | 9,680,083 | 9,226,368 |
| Վաճառքի ինքնարժեք | 6,812,093 | 6,639,289 |
| Համախառն շահույթ (վնաս) | 2,867,990 | 2,587,079 |
| | | |
| Այլ եկամուտներ | 238,102 | 173,977 |
| Վարչական ծախսեր | 366,745 | 348,795 |
| Իրացման ծախսեր | 1,288,264 | 1,158,185 |
| Այլ ծախսեր | 224,195 | 269,258 |
| **Գործառնական գործունեությունից շահույթ/վնաս** | 1,226,886 | 984,818 |
| Ֆինանսական ծախսեր | - | 79 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս) | | |
| **Շահույթ (վնաս) մինչև հարկումը** | 1,226,886 | 984,739 |
| Շահութահարկի գծով ծախս | 263,825 | 197,193 |
| **Տարվա շահույթ(վնաս) շարունակվող գործունեությունից** | 963,061 | 787,546 |
| Ընդհատված գործունեության զուտ շահույթ (վնաս) | | |
| **Ընդամենը տարվա շահույթ (վնաս)** | 963,061 | 787,546 |
| | | |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ** | | |
| **Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ** | | |
| **Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունքներ** | 963,061 | 787,546 |
| Շարունակվող գործունեությունից մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս) | | |
| Շարունակվող գործունեությունից մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս) | | |

Տնօրեն Տ. Մինասյան
Գլխ. հաշվապահ Կ.Ասլանյան

**ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ**
**Անվտանգության հարցերով փորձագետ**

# «Երկաթյա վարագույրների ետևում»

## Հետախուզության պահոցներից

Հետախուզությունը արդարացնում է իր գոյությունը եւ իր վրա ծախսվող հսկայական գումարները պետական բյուջեից` պարզապես տեղեկատվություն մատուցելով: Տեղեկատվությունը դա հենց հետախուզության «մաքուր եկամուտն է», որը հայթայթվում եւ մատակարարվում է պետական մարմիններին: Այդ տեղեկատվության մեջ կարող են լինել փաստեր, իրադարձություններ, գաղտնիքներ (սկսած ռազմականից վերջացրած սոցիալ-տնտեսականով), անցած գնացած պատմություններ, սպասվող իրավիճակներ, գիտական ասպարեզի նորույթներ եւ հայտնագործություններ, ստեր, ապատեղեկատվություններ, «օդում կախված լուրեր» եւ այլն, եւ այլն: Եվ նշված «տեղեկատվական ջունգլիներում» ոչ մի բան արժեք չունի, մինչեւ որ ինֆորմացիայի հետ աշխատող ստորաբաժանումները եւ անձինք չբացահայտեն այդ փաստերի էությունը, միտքը, շղթայական կապը, մոտիվացիան, հետեւանքները… եւ այլն: Գլխավորը ճիշտ սկզբունքներով համեմատեն այդ փաստերը այլ աղբյուրներից ձեռք բերված տեղեկատվության հետ եւ ստանան հնարավորինս «պարզ պատկերներ»: Միայն այս կտրվածքով «հետախուզության մթերքը» (տեղեկատվությունը) կարող է մատչելի լինել այն սպառողի (օգտագործողի) համար:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում հետախուզության գործունեությունը ստորադասվում է դաշնային կառավարության այն մարմիններին, որոնք մշակում են պետության քաղաքականությունը` ներքին եւ արտաքին: Օրինակ, որպես տեղեկատվություն սպառող ԱՄՆ-ում կարող են հանդես գալ Զինված ուժերը, Պետական դեպարտամենտը, Ազգային անվտանգության խորհուրդը, երկրի նախագահը:

Խորհրդային Միության (իր գոյության ընթացքում) հետախուզությունը, ինչպես եւ պետության մյուս բոլոր ենթակառույցներն ու դրանց օղակները ենթարկվում էին եւ պատկանում էին Կոմունիստական կուսակցությանը: Ընդ որում, այդ հետախուզությունը տարածվում եւ տարածում էր շոշափուկները ե՛ւ երկրի ներսում, ե՛ւ արտասահմանում:

Չկան օրեր, որոնք պետք է սահմանափակեն հետախուզության աշխատանքը, իսկ եթե կան, դա ծիծաղելի է, ի՞նչ օրենք, եթե դու աշխատում ես այլ պետության տարածքում եւ հայթայթում ես (կարելի է օգտագործել նաեւ «գողանում ես» բառը) այնտեղ քո երկրի համար պիտանի «մթերք»:

Հայերը, ինչպես Խորհրդային Միությունում (իհարկե եւ Հայաստանում) այնպես էլ ամբողջ Սփյուռքում, ուզեին, թե չուզեին, կամովին թե ակամա առնչվում էին այդ հզոր «մեքենայի» հետ` Պետական անվտանգության կոմիտեի հետախուզության հետ: Այդ մասին կան գեղարվեստական գրքեր, ֆիլմեր, վավերագրություն, հետազոտություններ, հետախույզների մեմուարներ եւ այլն, եւ այլն:

Որեւէ երկրի հետախուզություն իր աշխատանքում օգտագործում է մարդկային ռեսուրսներ (առաջ էլ եմ գրել այդ մասին): Առանց դրա հնարավոր չէ: Հետախուզությանը հարկավոր է գործակալական ցանց եւ մեծ քանակությամբ «օգնականներ»:

Անձը հետախուզության օգնական կարող է դառնալ գաղափարական հիմքերի վրա, նյութական շահերից ելնելով, ինչպես նաեւ վարկաբեկիչ նյութերից զգուշանալով: Երեք իրավիճակներն էլ նորմալ են հետախուզության համար, եւ հասարակությունը դրան նորմալ պետք է վերաբերվի, առանց սոցիալական «պայթյունների», սենսացիաների եւ անհիմն պահանջների ընդդեմ ազգային հատուկ ծառայության:

Որեւէ քաղաքացի եւ անհատ կարող է քննադատել, դատապարտել, պահանջել «լյուստրացիա», վարկաբեկել իր երկրի հատուկ ծառայությանը, ընդդիմախոսել, բայց երբ նա դառնում է պետական այր, նա պետք է փոխի իր դիրքորոշումը շատ կարճ ժամանակում, հասկանա հետախուզության տեղն ու դերը պետական գործիքակազմում եւ սատարի այդ օղակին, հակառակ դեպքում վայն եկել ու տարել է այդ պետությանը, երկրին, ժողովրդին ու այդ քաղաքական գործչին: Օրինակ բերեմ Իսրայելին, այդ երկրի հետախուզությանը` «Մոսսադին» եւ հրեա ժողովրդին:

«Մոսսադի» հետախուզությունը իրականացնում է բավականին բարդ եւ ծավալուն խնդիրներ (ընդ որում Հայաստանի եւ Իսրայելի խնդիրները շատ հարցերում ընդհանրություններ ունեն): Տեղեկատվության հայթայթումը թերեւս նրանց ամենաբարդ խնդիրը չէ: Հակառակորդի, թշնամու (իսկ երբեմն նաեւ դաշնակիցների) գործակալական ցանցերի հայտնաբերում, դիվերսանտների, ահաբեկիչների հայտնաբերում, երբեմն նրանց ֆիզիկական լիկվիդացիայի կազմակերպում, հեղաշրջումներ, այլ պետությունների «գրպանը» մտնելու գործողություններ` հաստկապես գիտատեխնիկական նվաճումների գծով եւ այլն: Իսրայելցի հետախույզը նախքան «թիրախ» երկիր մեկնելը այդ երկրում բնակվող շատ հրեա ընտանիքների հասցեներ ունի: Նա վստահորեն գիտի, որ 10-ից առնվազն 9-ը հրեաներ անհրաժեշտության դեպքում (եթե ինքը ձախողվի) իրեն «թաքստոց» կտրամադրեն մինչեւ նրան հաջողվի այլ փաստաթղթերով լքել այդ երկիրը: Նման շռայլություն իրենց չեն կարող թույլ տալ ռուս, ամերիկացի, թուրք, ֆրանսիացի, արաբ հետախույզները, եւ թող ներեն իմ հայրենակիցները, ոչ էլ հայ հետախույզը: Համենայնդեպս, այդ է հուշում ինձ այսօր ստերտսիվ քաղաքական իրավիճակը իմ երկրի ներսում եւ Սփյուռքում, եւ իհարկե մեր հատուկ ծառայության վիճակը:

Եվ այսպես, չի կարելի անտեսել հետախուզության կարեւորությունը պետության կայացման գործում, չի կարելի քարկոծել «օգնականներին», որոնք պատրաստակամություն են հայտնել օգնել հետախուզությանը, չի կարելի նրանց անունները «լույս աշխարհ» բերել, եւ էլի մի շարք «չի կարելիներ»: Չի՛ կարելի, բայց միշտ կգտնվեն Սնոուդեններ, Էյմս, Գարդիեվսկի, Սկրիպալներ, որոնք անուններ կհանեն «լույս աշխարհ», ընդ որում ոչ թե պարզապես կիրառարկեն ինչ-որ անուններ, այլ կհանձնեն այդ անունները հակառակորդին: Ի՞նչն է նրանց դրդում այդ քայլին, դա արդեն ուրիշ պատմություն է:

Այս անգամ ուզում եմ նշել ոմն Վասիլի Միտրոխինի մասին, որի «շնորհիվ» հրապարակվեցին ազգությամբ հայ «օգնականների» անուններ:

*(շարունակելի)*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում շահագործվող McAfee սարքավորումների ծրագրային ապահովման ուղեկցման արտոնագրերի ձեռքբերման նպատակով կազմակերպության ընտրության հրապարակային մրցույթի կազմակերպման մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է հրապարակային մրցույթ` Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում շահագործվող McAfee սարքավորումների եւ ծրագրային ապահովումների ուղեկցման արտոնագրերի ձեռքբերման նպատակով կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել այն անձինք (այսուհետ` Մասնակից), որոնք ունեն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական որակավորում, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ, նյութական եւ աշխատանքային ռեսուրսներ, որոնք մրցույթի հայտը ներկայացնելու պահին չունեն ժամկետանց պարտավորություններ` Հայաստանի Հանրապետության հարկային եւ սոցիալական ապահովագրության վճարների գծով:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ` ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյան 6:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետն է է 2020թ. հուլիսի 20-ը ժամը 16-00:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամն է 2020թ. հուլիսի 23-ը ժամը 16-00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2020թ. հուլիսի 30-ին ժամը 16-00:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ` Ներքին ծառայությունների վարչություն, հեռ. (010) 59-28-02, 59-28-05 ներքին` 18-02, 18-05, էլ. փոստ galust.galstyan@cba.am:

**ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԹԵՔԵՅԱՆ ՓԱԲԼԻՇԻՆԳ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
**e-mail:** azg@azg.am, azgdaily@gmail.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960,
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը` «Ազգ» թերթի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Թեքեյան Փաբլիշինգ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 286.110.1041780, տրուած` 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 25.6.2020, գինը` 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում` Արշակունեաց 2: